Թրամփը հայտարարում է եւ ուզում է հավատալ, որ ամեն ինչ վերացրել են եւ այլեւս անելիք չունեն: Հոգեբանորեն Թրամփն Իրանից դուրս գալու տրամադրության մեջ է: Ճիշտ՝ ինչպես հունվարին Իրանի դեմ հարձակվելուց: Նրա անձնական մոտեցումները, ընկալումները որոշիչ գործոն են այն որոշումներում, որոնք կայացնողն ինքն է:

Կարդացեք՝ էջ 4

Քանի դեռ Չինաստանը ռազմական առումով թույլ է կամ բավարար համարձակություն չունի՝ պաշտպանելու իր դաշնակից երկրներին, ԱՄՆ-ն կարող է ռազմական գերիշխանություն հաստատել դրանցից յուրաքանչյուրի նկատմամբ: Առաջին հարվածը հասցվեց Վենեսուելային, որը Չինաստանի նավթի հիմնական մատակարարներից էր: Երկրորդը Իրանն էր:

Կարդացեք՝ էջ 5

Գնահատման չափորոշիչ սահմանելիս Բռնապետը պարգեւի կամ պատժի չափման միավոր էր օգտագործում «ստորաս» անվամբ գնահատման միավոր՝ բաղկացած «ստոր» եւ «աս»-աստիճան արմատներից, ինչը նշանակում է «ստորության աստիճան» կամ «ստորաքարշության աստիճան»: Ամեն մեկի համար սահմանել էր «ստորաս»-ի աստիճաններ:

Կարդացեք՝ էջ 7

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 34 (4169), 7 մարտ, շաբաթ, 2026

Հրապարակ

www.hraparak.am



Երեկ իշխանականները չհիմնավորված ոգեւորության մեջ էին Ամերիկյան միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) կողմից ՀՀ-ում իրականացված հանրային կարծիքի ուսումնասիրության արդյունքների առիթով, համաձայն որոնց՝ ՔՊ-ին վստահում է հարցվածների 18-24 տոկոսը՝ կախված հարցի ձեւակերպումից: Այսինքն՝ մի ցուցանիշ, որը հեռու է ՔՊ-ականների քարոզչական փուչիկից, թե հունիսյան ընտրություններից հետո իրենք սահմանադրական մեծամասնություն են կազմելու: Ընդ որում՝ տեղեկություններ կան, որ հարցման հրապարակված արդյունքներն իրականությունից բավականին հեռու են, իսկ նույն ընկերության կողմից արձանագրված իրական պատկերը բավականին տխուր է եւ իշխանությունների խնդրանքով է խմբագրվել: Իշխանությունն իր արտաքին հովանավորներին համոզել է, որ նման սոցհարցումների միջոցով հնարավոր կլինի ազդել ընտրողների տրամադրությունների եւ ըստ այդմ՝ ընտրությունների արդյունքների վրա: Եթե ընտրողին համոզեն, որ ամեն ինչ կանխորոշված է, ՔՊ-ն առաջատարն է՝ չարժե գնալ ընտրությունների, ցածր մասնակցություն ապահովեն, հաղթանակն իրենց գրպանում կլինի: Մեր աղբյուրները չեն բացառում, որ առաջիկայում նման հարցումներ էլի են հրապարակվելու:

Պետական գերատեսչություններում, ինչպեսեւ սպասվում էր, կանանց տոնի առթիվ պարգեւավճարներ են բաժանվել, սակայն մեզ ասացին, որ որոշ գերատեսչություններում նաեւ տղամարդիկ են օրերս պրեմիա ստացել, եւ այս փաստը համակարգում անեկդոտների առիթ է դարձել, թե նախընտրական տարում կանանց տոնի առթիվ պարգեւատրում են ոչ միայն կանանց, այլեւ՝ տղամարդկանց: Որոշ գերատեսչություններից փորձեցինք ճշտել տեղեկությունը, մեզ վստահեցրին, որ եթե անգամ նման դեպքեր են եղել, ապա ամենամսյա պարգեւատրումների ֆոնդից պարգեւատրվել են միայն «արժանի» աշխատակիցները: Նշենք, որ տարբեր գերատեսչություններում պարգեւատրման չափը տարբեր է, օրինակ՝ ԱԺ-ում 70 հազար դրամի չափով են պարգեւատրվել, իսկ, օրինակ, մարզպետարաններում աշխատող կանանց 15 հազար դրամ են տվել: Ընդ որում, որոշ մարզպետարաններում՝ տարբեր բաժիններում տարբեր է եղել կանանց տոնի առիթով տրված հավելավճարը: Դե, միլիոնների հասնող պարգեւավճարներ մեզանում միայն ՔՊ-ական վերնախավն է ստանում, շարքային մարդիկ կարող են նաեւ 10-15 հազարով բավարարվել:

Ռեալ փաստեր միայն

Այս օրերին եւ մինչեւ հունիսի 7-ը, ամեն օր հիշեք Գերմանիայի նշանավոր կանցլեր Օտտո Ֆոն Բիսմարկի խոսքերը. «Երբեք այնքան չեն ստում, որքան պատերազմի ժամանակ, որսից հետո եւ ընտրություններից առաջ»: Այս՝ առաջիկա ամիսներին դեռ շատ կստեն ու մեզ կմոլորեցնեն, կփորձեն ապակողմնորոշել ու կողմնորոշել, համոզել ու ներշնչել: Մի տրվեք այդ մանիպուլյացիաներին: Մի հավատացեք եւ ոչ մի սոցիոլոգիական հարցման արդյունքներին ու դրանցով մի կողմնորոշվեք ոչ ուժերի հարաբերակցության, ոչ ձեր անելիքների հարցում: Մի վստահեք եւ ոչ մի քաղաքագետի ու քաղաքագիտական վերլուծության: Մի լսեք ոչ մի խոստում եւ ապագայում ոսկե սարեր կառուցելու առաջարկ: Մի վախեցեք եւ ոչ մի սպառնալիքից ու մի հավատացեք ոմանց տեսլականներին՝ ոչ խաղաղության եւ ոչ էլ պատերազմի: Մի առաջնորդվեք ոչ ձեր անմիջական ղեկավարի, ոչ պաշտոն զբաղեցնող ազգականների, ոչ էլ փողատերերի խորհուրդներով: Առհասարակ, այն ամենը, ինչը հնարավոր չէ շոշափել, տեսնել, զգալ, ուշադրության մի արժանացրեք: Կհարցնեք՝ իսկ ինչպե՞ս կողմնորոշվենք եւ ո՞ւմ ընտրենք: Մի չափանիշ վերցրեք կողմնորոշման համար՝ ռեալ, շոշափելի փաստերը, արդեն կայացած իրողությունները: Ինչպիսի՞ կառավարում է իրականացրել Նիկոլ Փաշինյանի իշխանությունը վերջին 8 տարվա ընթացքում: Ինչպիսի՞ բարեկեցություն է ապահովել երկրում, ինչքանո՞վ ենք մենք խաղաղ ապրել այս 8 տարիներին, ի՞նչ են կառուցել ու ստեղծել: Ի՞նչ են ստեղծել իրենց կյանքի ընթացքում այն ուժերը, որոնք իշխանության չեն այսօր: Եթե ժամանակին իշխանության են եղել, ի՞նչ են արել պաշտոնավարման ընթացքում: Եթե իշխանության չեն եղել, ի՞նչ են ստեղծել՝ ի՞նչ շոշափելի արդյունք, ինչպիսի՞ աշխատանքային միջավայր, ի՞նչ են ասում նրանց մասին իրենց կուսակիցներն ու աշխատողները:

Մարտի 1-ին Իջեւանի Աճարկուտ գյուղից Ֆեյսբուքում ուղիղ եթեր մտնելով՝ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանն անդրադարձավ գյուղերում պետական աջակցությամբ 16 եւ 21 միլիոն դրամ արժեքով կառուցվող տների ծրագրին: Նա ուղիղ եթերի վերջում հայտարարեց. «Եվ շատ սիմվոլիկ է նաեւ, որ ես, լինելով Աճարկուտ գյուղում, ուզում եմ ասել, որ ըստեղ էլ է լինելու քվոտա՝ մոտակա դպրոցով պայմանավորված, որտեղ Կիրանցում մենք նոր դպրոց ենք կառուցում եւ ունենալու ենք նաեւ քվոտա Աճարկուտ գյուղի համար, որպեսզի մեր գրեթե բոլոր գյուղերը հնարավորությամբ հավասարաչափ զարգանան»: Կիրանցում նոր դպրոցը բացվել է 2024թ. սեպտեմբերի 2-ին, որին ներկա է եղել նաեւ Նիկոլ Փաշինյանը: Փաշինյանը պարբերաբար քաղաքացիների այց է կազմակերպում դեպի Կիրանց, սահման դարձած Կիրանցի պատը ներկայացնում են որպես մեծ ձեռքբերում, այցելում են Կիրանցի նորակառույց դպրոց: Լավ կլինի, որ Նիկոլ Փաշինյանը նման խմբի մեջ ներառի նաեւ նախարար Արսեն Թորոսյանին, որը հայտարարել է Կիրանցում նոր դպրոց կառուցելու մասին:

ԱՐՇԱԿ ՍՐԲԱԶԱՆԻ ՏԵՂԱՇԱՐԺԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԵԼ ԵՆ

Նախօրեին մոտ եռամսյա կալանքից ազատ արձակված Արշակ սրբազանի նկատմամբ դատարանը սահմանափակումներ է կիրառել: Սրբազանին արգելված է դուրս գալ Վաղարշապատ խոշորացված համայնքի տարածքից, դուրս գալու դեպքում էլ պետք է նախապես տեղեկացնի եւ համաձայնություն ստանա Պրոբացիոն ծառայությունից, որի վարչական հսկողությանն է հանձնված սրբազանը: Նա չի կարող նաեւ շփումներ ունենալ գործով անցնող վկաների հետ: Բայց, զարմանալիորեն, հրապարակային հայտարարություններ անելու արգելք նրա նկատմամբ չեն կիրառել: Արշակ սրբազանը կալանավորված էր 2025 թվականի դեկտեմբերի 5-ից: Նրա նկատմամբ հարուցված է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 4-րդ կետերով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ թմրամիջոց ապօրինի իրացնելը՝ հանդիսադիր վայրում): Ի դեպ, վերջերս ոմանց նկատմամբ ոչ միայն տնային կալանքի որոշումներ են կայացվում, այլեւ կոնկրետ նշված տարածքը չլքելու սահմանափակումներ: Օրինակ, ՊԵԿ նախկին նախագահ Վարդան Հարությունյանին էլ արգելված է Երեւանի վարչական տարածքից դուրս գալը:

ՑՍՄԱՆԴ

2000-2001 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՅԴ ԱՌԱՋԱՐԿԸ ԵՂԵԼ Է՝ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՐԺԵԼ Է

Կրթության փորձագետ **Սերոբ Խաչատրյանի** հետ զրուցել ենք դպրոցների փակման-միավորման գաղափարի շուրջ՝ ինչ հնարավոր խնդիրներ են առաջանալու, եւ ինչ հետեւանքներ է դա ունենալու կրթության եւ երկրի համար:

- ԿԳՄՍՆ-ն նախատեսում է 2026թ. սեպտեմբերի 1-ից 231 դպրոց փակել, իրենք ասում են՝ միավորել այլ դպրոցների հետ: Սա ի՞նչ հետեւանքներ է ունենալու:

- Նախ, նախապատմությունը ներկայացնեմ: Խորհրդային տարիներին Հայաստանն ուներ մոտ 1400 դպրոց՝ 10-ամյա կրթական համակարգով եւ 600 հազար աշակերտով: Հետո մենք ունեցանք աշակերտների կտրուկ անկում, մի շրջան նույնիսկ 350-360 հազար աշակերտ ունեինք, բայց դպրոցների թիվը մոտավորապես նույնն էր՝ 1400: Ճիշտ է, որոշ պետական դպրոցներ այդ տարիներին փակվել են, բայց քանի որ ստեղծվել է 45 մասնավոր դպրոց, թիվը նույնն է մնացել: Իսկ այս պահին ունենք 420 հազար աշակերտ: Անկախությունից հետո, դեռեւս 25-30 տարի առաջ, Հայաստանի առջեւ դրվեց այս խնդիրը. եթե դուք ունեք այսքան քիչ աշակերտ, արդյո՞ք ձեզ պետք է այսքան դպրոց, որ 250 հազարով աշակերտների թիվը պակասել է, եւ բողոքում եք, թե գումար չունեք, ուսուցիչների աշխատավարձը չեք կարողանում բարձրացնել: Իսկ գուցե պետք է դպրոցներն օպտիմալացնե՞լ, որը նշանակում է գումար խնայել, քանի որ ամեն դպրոց տարեկան ամենաքիչը 20-25 միլիոն դրամ է արժենում պետության համար: Դրանք 2000-2001 թվականներն էին, եւ Հայաստանը մերժեց այդ առաջարկը, որովհետեւ այդ դպրոցները հիմնականում սահմանամերձ գոտիներում էին՝ Սյունիքում, Տավուշում: Եվ այն ժամանակ Հայաստանի կառավարությունը մտածեց, որ դպրոցների փակումը կբերի այդ գյուղերի դատարկման: Գյուղերի մի մասն անմիջապես Ադրբեջանի հետ էր հարեւան՝ ինչպես Տավուշում, իսկ մի մասն էլ, այսպես ասած, Արցախի հենարանն էր: Դրա համար էլ որոշվեց այս ծրագիրը մերժել:

- Բուհերի միավորման հարցն ի՞նչ էր դրված՝ ինչպես դպրոցներինը:

- Այդ թեման առաջ էր բերվում նաեւ միջազգային փորձագետների կողմից, որոնք Հայաստանում հետազոտություններ էին անում: Նույն խնդիրն առաջ էր քաշվում նաեւ բուհերի դեպքում, քանի որ խորհրդային տարիներին մենք ունեցել ենք փոքրաթիվ բուհեր՝ մոտ երկու տասնյակ, եւ ունեցել ենք 50 հազար ուսանող: Հիմա մենք ունենք մոտավորապես 75 հազար ուսանող եւ մոտ 50 բուհ, որոնցից 23-ը պետական են: Բուհերի միավորման հարցում էլ նույն սկզբունքն է. ինչո՞ւ եք պահում, օրինակ, մի Բրյուսով, մի մանկավարժական, մեկն էլ ֆիզկուլտինստիտուտն է: Երեքն էլ միջին կամ փոքր չափերի բուհեր են՝ մի 3 հազար կամ 5 հազար ուսանողով: Եկեք դրանք միավորեք՝ փող խնայեք եւ այդ փողով զարգացրեք այդ մի բուհը: Այդ խնդիրը միշտ դրվել է, որովհետեւ կապիտալիզմի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ փորձում է կրթությունը բիզնեսի տրամաբանությամբ չափել, այսինքն՝ ինչո՞ւ անարդյունավետ փող ծախսեմ, փոխարենը՝ միավորեմ, կրճատեմ եւ ավելի շատ եկամուտ ստանամ: Իհարկե, ես այդ բիզնես-կոնցեպտի հետ համաձայն չեմ, որովհետեւ երբեմն հաշվի չեն առնվում տեղային առանձնահատկությունները, որ սա անվտանգության խնդիրներ ունեցող երկիր է, պատերազմական իրավիճակում գտնվող երկիր է: Եվ երկար ժամանակ Հայաստանը մերժում էր այդ հարցը:

- Երկար ժամանակ մերժվածը դարձավ ընդունելի՝ որպես խնդրի լուծում: Իսկ ո՞ր տարբերակն է արդյունավետ կամ ի՞նչ ռիսկեր է պարունակում:

- Ի վերջո, այս կառավարությունը համաձայնեց, որ ճիշտ կլինի՝ դպրոցներն օպտիմալացնենք: Հիմա խնդիրն ի՞նչն է: Մենք 35 տարի ոչինչ չարեցինք այդ գյուղերը փրկելու համար, որոնք աստիճանաբար դատարկվել են: Մի փոքրիկ վիճակագրություն բերեմ, որի մասին չի խոսվում Հայաստանում, բայց փաստ է: Հայաստանի փոքր, սահմանամերձ գյուղերում կա չամուսնացած տղամարդկանց մեծ թիվ: Օրինակ բերեմ մի գյուղ, որը, ասենք, ունի 30 աշակերտ, եւ այդ գյուղում կա 25-40 տարեկան մոտ 30 չամուսնացած տղամարդ: Ինչո՞ւ: Քանի որ աղջիկները դպրոցում լավ են սովորում, ավարտելուց հետո գնում են կա՛մ մարզկենտրոն, կա՛մ Երեւան, կա՛մ ամուսնանում են ավելի մեծ գյուղերում: Եվ տղաները բանակից վերադառնալուց հետո գյուղում շատ քիչ տարեկից աղջիկներ են գտնում: Երբ փորձում են ուրիշ գյուղերից աղջիկներ բերել, չեն գալիս, քանի որ փոքր գյուղ է, եւ հեռանկար չկա: Գյուղը, որ ունի 30 աշակերտ, տղաների ամուսնանալու դեպքում միջինը կարող էր ունենալ հավելյալ եւս 60 աշակերտ: Եվ խնդիրը ձնագնդի տեսքով ավելի է մեծանում. գյուղը գնալով փոքրանում է, աշակերտների թիվը պակասում է, որ արդեն հասել է կատաստրոֆիկ վիճակի: Մենք հիմա Հայաստանում ունենք գյուղեր, որոնք 1, երբեմն 3, 5, 10 աշակերտ ունեն: Իսկ այդ դպրոցները պետության վրա շատ թանկ են նստում:

- Անդրադառնանք հիմնական խնդիրներին եւ հասկանանք, թե որոնք են արդյունավետ լուծումները:

- Հիմա մենք 2 խնդիր ունենք: Այդ դպրոցներում կա որակի անկում. պատկերացրեք՝ ձեր երեխան 12 տարի մենակ նստում է դասի կամ դասասենյակում ունի 1-2 ընկեր, իսկ դա կրթության որակի վրա ազդում է: Այդ գյուղերում նաեւ ուսուցիչների խնդիր կա. գյուղը փոքր է, ոչ ոք չի գնում այնտեղ դասավանդելու, եւ չեն ամուսնանում այնտեղ, որն էլ առաջացնում է ուսուցիչների խնդիր: Իսկ նախարարության առաջարկն այն է, որ եթե այս երեխաներին տանում ենք կողքի գյուղ, որտեղ կկառուցենք նոր դպրոց, ճանապարհները կասֆալտապատենք, ավտոբուս կտրամադրենք, երեխան կստանա բարձր կրթություն: Ասենք, որ դա դրական կողմն է, բայց նախարարության այդ ծրագիրն ունի բազմաթիվ խնդիրներ: Առաջին. այո, մեր գյուղերը դատարկվում են, հատկապես՝ կտրված սահմանամերձ գյուղերը, եւ այս որոշման դեպքում այդ ընթացքը շատ ավելի մեծ թափ կստանա: Եթե այդ գյուղը վտանգ ուներ՝ մի 50-100 տարում դատարկվելու, հիմա մի 20 տարում կդատարկվի, կվերջանա: Ըստ էության, մենք այս քայլով այս ընթացքն ենք արագացնում: Եվ այդ գյուղերը մեծ թիվ են կազմում Սյունիքում, արդեն 4 տասնյակից ավելի դպրոցներ հենց Սյունիքում են միավորվելու: Մենք լավ գիտենք, որ այս պահին Սյունիքը Հայաստանի ամենամտահոգիչ հատվածն է: Եվ անվտանգային տեսանկյունից, մեղմ ասած, լավ չէ այդ գյուղերի արագ դատարկվելը: Մյուս խնդիրն այն է, որ եթե դպրոցը փակվում է, գյուղը կորցնում է աշխատատեղեր. տնօրեն, ուսուցիչներ, հաշվապահ, պահակ, հավաքարար եւ այլն, որն իր հերթին առաջ է բերելու գյուղը լքելու հավելյալ վտանգ: Նաեւ երեխաների տեղափոխման հարցն է խնդրահարույց: Ձմռանը, հատկապես Շիրակում, կարող են ճանապարհները փակվել, որն էլ առաջացնելու է բացակայությունների խնդիր: Իսկ թեթեւ վատառողջ լինելու դեպքում ծնողը երեխային չի ուղարկի դպրոց: Եթե հանկարծ վատ զգա, ինքը հեռու է, ո՞վ է բերելու տուն, ո՞նց են բերելու: Բացակայություններ են լինելու նաեւ ավագ դասարաններում, որովհետեւ այդ աշակերտներից շատերը դասերից հետո աշխատում են: Եթե գյուղում են, կկարողանան, իսկ կողքի գյուղից մինչեւ գան հասնեն, ժամեր են կորցնելու: Ծնողների համար էլ են ստեղծվելու անհարմարություններ. ծնողական ժողով գնալ, հանդեսների, միջոցառումների ժամանակ երեխայի կողքին լինել եւ այլն: Ո՞նց են գնալու, պետությունը հոգալո՞ւ է, կարծում եմ՝ ոչ: Կարող են նաեւ միջգյուղային խնդիրներ առաջանալ երեխաների միջեւ, հարաբերություններ սրվել. մեր գյուղ-ձեր գյուղ... եւ դժվարանալու է այդ դպրոցների կառավարումը: Իսկ ամենակարեւորը, որը ոմանք համարում են պաթոս, այն է, երբ գյուղում կա դպրոց՝ կա ապրելու հույս, գյուղը շնչում է. հյուրեր են գալիս, միջոցառումներ են լինում, մշակույթ կա: Գյուղի համալսարանը, մատենադարանը, թանգարանը դպրոցն է: Այդ գյուղերի մեծ մասում այլ բան չկա, բացի դպրոցից: Եթե հանենք սա՝ դպրոցը, գյուղը դառնում է բնակավայր. ապրում են այդտեղ, բայց որեւէ բան տեղի չի ունենում:

- Իսկ սա կրթական իրավունքի, մարդու իրավունքի, նաեւ բարոյական առումով՝ իրավունքի եւ ազատ կամքի ոտնահարում չէ՞:

- Շատ բան կախված է նրանից, թե նախարարությունն ինչպես է այդ ծրագիրն իրականացնելու: Որքան էլ նշեցի դրական կամ բացասական կողմերը, նժարը կարող է թեքվել այս կամ այն կողմ՝ կախված այն բանից, թե ինչպես սա կարվի: Օրինակ, եթե ծնողները զգան, որ երեխան որակյալ կրթություն է ստանում եւ տարբեր խմբակներում է ընդգրկված, գուցե ասեն՝ լավ, այս 10 կմ-ն թող գնա-գա: Իսկ եթե ամեն ինչ մնա նույնը, ծնողներն ասելու են՝ էլ ինչո՞ւ ենք այս զրկանքները կրում: Բայց, անկախ այս ամենից, պարզ է, որ այս գյուղերը գնալու են արագ մարման: Գուցե շարունակեն մնալ, բայց բնակիչները լինելու են 50-60 տարեկանից բարձր: Այ, սա է հիմնական խնդիրը, որ մենք այս գյուղերը չփրկեցինք:

- Իսկ արդյո՞ք այս դեպքում իրատեսական չի դառնում Բաքվի ամենօրյա հաճախականությամբ առաջ տարվող «Արեւմտյան Ադրբեջան» ցնդաբանությունը:

- Այդ ռիսկը կա: Եթե այդ մարդիկ, որ նախկինում ապրել են Հայաստանում, իրենց նոր սերունդներով գան, արդեն պարզ է, որ այդ գյուղերում կարող են տեղավորվել եւ, ինչու ոչ, կարող են հարց բարձրացնել, իրենց դպրոցը բացել: Իսկ նախարարության այս ծրագիրը եթե ընթացք ստանա, պարզ է, հունիսյան ընտրություններից հետո է լինելու: Այդ ժամանակ ավելի հստակ կիմանանք, թե որքանով է իրագործելի: Եվ այդ ռիսկը, այո, միանշանակ կարող է առաջանալ: Հաճախ հարցնում են՝ ինչ եք առաջարկում: Կար մի շատ լավ գաղափար, որը 2016-2017թթ. քննարկվում էր, որ բոլոր գյուղերում պահում ենք կրտսեր դպրոց՝ 1-4-րդ դասարանները, եւ այդ դպրոցը դառնում է կողքի գյուղի դպրոցի մասնաճյուղը: Այս գաղափարն ինչով է լավ. որ գոնե փոքր երեխաները մնում են գյուղում, քանի որ նրանց տեղաշարժի հարցը խաղուպար չէ եւ մեծ ռիսկերի հետ է կապված: Գիտենք, որ հիմա 6 տարեկանից են գնում դպրոց. այդ երեխան կարող է լացել, մամային ուզել: Գուցե այդ տարիքի երեխաներին ավելորդ սթրեսի չենթարկեինք եւ պահեինք գյուղո՞ւմ: Դա շատ մեծ ծախս չի պահանջի. ընդամենը 2-3 սենյակ եւ դասվար: Հետո միայն՝ 5-րդ դասարանից սկսած, երեխաները տեղաշարժվեին: Այդ ձեւով ե՛ւ դպրոցը կպահեինք, ե՛ւ գյուղում կլիներ սեպտեմբերի 1, Այբբենարանի ավարտական հանդես, մի տիկնիկային ներկայացում եւ այլն: Գյուղում ինչ-որ մշակութային հենման կետ կմնար, գյուղը կշնչեր: Եթե հիմա մենք դպրոցը հանում ենք, գյուղ չի մնում: Մնում են միայն տուն, հողամաս, կենդանիներ եւ մի քանի մարդ: Ես դա գյուղ չեմ համարում: Գյուղում պետք է լինեն ենթակառուցվածքներ՝ մշակութային, հասարակական, որովհետեւ դա է ապրելակերպը:

Ֆելիքս ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՐՑՈՒՄ

ԵԹԵ ԱՅԴ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԻՇԽՈՂ ԹԻՄԻ ՎԱՐԿԱՆԻՇՆ ԸՆԴԱՄԵՆԸ 18 ՏՈԿՈՍ Է, ԴԱ ՇԱՏ ՎԱՏ Է ԻՐԵՆՑ ՀԱՄԱՐ

Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) հարցումների համաձայն, Նիկոլ Փաշինյանի ու ՔՊ-ի վարկանիշն ընդամենը 18 տոկոս է, Սամվել Կարապետյանինը՝ 6%, Ռոբերտ Քոչարյանինը՝ 3%, Գագիկ Ծառուկյանինը՝ 3%: Այս վատ պատկերից ՔՊական իշխանությունը ցնծության մեջ է ընկել: Թեմայի շուրջ «Հրապարակը» զրուցել է սոցիոլոգ **Գեւորգ Պողոսյանի** հետ:

- Ըստ Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) հարցումների՝ ՔՊ կուսակցությունն այս պահին ունի 18 տոկոս ձայն, սակայն դրանից Փաշինյանի ռեժիմը շատ է ուրախացել: Ըստ Ձեզ՝ 18 տոկոսը լավ ցուցանիշ է, եւ, առհասարակ, այս հարցման մասին ինչ կարծիք ունեք:

- IRI-ի հարցումները բավականին վստահելի են, նրանք հիմնականում ճշգրիտ ցուցանիշներ են տպագրում, սակայն իրենք պատվիրատուն են, այլ ոչ թե կատարողը: Սա շատ կարեւոր նրբություն է, նրանք մշտապես դիմում են տեղական ինչ-որ կազմակերպության: Բնական է, որ տեղական կազմակերպությունն էլ այդ աշխատանքն իրականացնում է, խոսքը տեղական սոցիոլոգիական ծառայությունների մասին է: Սա՝ մեկ: Երկրորդ. ես ինչո՞ւ էլ չեմ համագործակցում նրանց հետ…. Ժամանակին համագործակցում էի, իսկ քովիդից հետո, քանի որ նրանք անցան հեռախոսային հարցումների, իսկ ես նախկինում միշտ դեմառդեմ էի անում հարցումներ՝ այցելելով հարցվողների տները, այն կոչվում է «ֆեյս թու ֆեյս»՝ դեմառդեմ հարցումներ: Դեռ այդ ժամանակներից սկսվեց հեռախոսային հարցումների պրակտիկան, ճիշտն ասած, ես՝ ինքս, դրան չվստահելով, քանի որ բազմաթիվ մեթոդական նրբություններ կան, որ անգամ չարժե այդ մասին երկար-բարակ խոսել, որոշեցի նրանց հետ ուղղակի չհամագործակցել: Ես այն կարծիքին եմ, որ քաղաքական հարցումները հեռախոսի միջոցով սխալ՝ ոչ վստահելի են, իրականությունը չարտացոլող: Մարդիկ միշտ էլ կասկածներ ունեն, որ կարող են գաղտնալսել, հետո՝ կա աշխատանքը կորցնելու վտանգ եւ այլն: Խոսքը բացառապես քաղաքական հարցումների մասին է: Իսկ, օրինակ, եթե հարցնեն՝ առավոտյան կոֆե խմո՞ւմ եք, թե՞ ոչ, կամ՝ ի՞նչ ճաշատեսակներ եք գերադասում, մարդիկ, վստահաբար, անկեղծ կպատասխանեն այդ հարցերին, քանի որ այդ պարագայում վախ չկա, բայց քաղաքական հարցումներն այլ են: Կուսակցություններ, ընտրություններ, առաջնորդներ՝ հնարավոր չէ հեռախոսի միջոցով մարդկանց իրական կարծիքն իմանալ:

- Այսինքն՝ IRI-ն հեռախոսո՞վ է հարցումներ անցկացրել:

- Նրանք դիմում են տեղական ինչ-որ մի կազմակերպության, իսկ այդ կազմակերպությունն անցկացնում է հեռախոսազանգի միջոցով: Ես վստահ եմ, որ այս հարցումը եղել է հեռախոսի միջոցով, իսկ նման հարցումները, կրկնում եմ, հայաստանյան պայմաններում անիմաստ են, այն մարդկանց վստահություն չի ներշնչում, մարդիկ վախենում են, եւ հետո՝ եթե այդ պայմաններում իշխող թիմի վարկանիշն ընդամենը 18 տոկոս է, դա շատ վատ է իրենց համար, այն սարսափելի ցածր է: Մի կուսակցություն, որն ավելի քան 8 տարի իշխանության է, երկիր է ղեկավարում, իբրեւ թե այս տարիներին հասցրել են ինչ-որ լավ գործեր անել եւ ունեն ընդամենը 18 տոկոս ձայն, դա նշանակում է, որ պատկերը շատ վատ է, սարսափելի է: ՔՊ-ի վարկանիշն առնվազն պետք է լիներ 50-60 տոկոս, ինչից պարզ կդառնար, որ հասարակությունը վստահում է իշխող ուժին, դա կնշանակեր, որ մարդիկ գոհ են Փաշինյանի աշխատանքներից եւ ուզում են, որ Փաշինյանը շարունակի իշխանավարել, սակայն 18 տոկոսը նշանակում է, որ մարդիկ չեն ցանկանում Փաշինյանին, հատկապես եթե հաշվի առնենք, որ այդ հարցումն արվել է հեռախոսազանգի միջոցով: Ինչ վերաբերում է ընդդիմությանը, ապա ընդդիմությունը եւս չունի բավարար ձայներ՝ ըստ այս հարցման: Այն թվերը, որ հրապարակվել են ընդդիմության համար, եւս շատ վատ են: Գուցե հետագայում լինեն որոշակի փոփոխություններ, սակայն այս հարցումը ցույց է տալիս, որ կուսակցությունների նկատմամբ մարդկանց վստահությունը մարել է, հանգել է, կարելի է ասել՝ զրոյացել է, եւ մարդիկ կուսակցություններին ընդհանրապես չեն վստահում: Սա նշանակում է, որ, հասարակության կարծիքով, կուսակցությունները ոչ թե երկրի շահերն են կարեւորում, այլ իրենց անձնական նեղ շահերը: Եթե մեկ նախադասությամբ ասենք՝ կուսակցություններն անկում են ապրում Հայաստանում:

- Ընդդիմությունը կարող է ինչ-որ բաներ խոստանալ եւ դրա դիմաց վարկանիշ բարձրացնել, սակայն իշխանությունները, փաստացի, ինչ կարողացել են, արդեն արել են՝ թոշակների բարձրացում, սահմաններին կրակոցներ չկան, ոմանց ներշնչել են, որ վերջապես այդքան բաղձալի խաղաղությունը թակել է Հայաստանի դուռը: Իշխանությունները կարող են այլ խոստումներով վարկանիշ բարձրացնել, թե՞ նրանց լիմիտը սպառվել է:

- Հենց դա է ողջ խնդիրը: 8 տարում ինչ կարողացան անել, արեցին, սակայն, ըստ երեւույթին, խոստացածն ամբողջապես չկարողացան անել, քիչ արեցին, եւ դրա համար էլ վարկանիշը ցածր է: Վերջին մի քանի ամսում մի 10 հազարով թոշակ բարձրացնելը մի մեծ բան չէ: Նախքան այդ էլ ասում էին՝ անիմաստ է, չենք բարձրացնելու թոշակ, փող չկա եւ այլն: Ես կարծում եմ, որ թոշակի բարձրացումը շատ թույլ քայլ էր, իսկ ինչ վերաբերում է խաղաղությանը, 2018-ից առաջ էլ խաղաղ ապրում էինք, խաղաղություն էր տիրում երկրում, դա այն խաղաքարտը չէ, որով կարողանաս մարդկանց գրավել: Իհարկե՝ մարդիկ խաղաղություն են ուզում, ոչ մի ժողովուրդ էլ պատերազմի մասին չի երազում, բայց հենվել այդ խաղաքարտի վրա՝ անիմաստ է: Հայաստանը 2018-ից առաջ էլ խաղաղ է ապրել, սակայն առանց այսպիսի նվաստացումների: Ո՛չ տարածքներ էինք զիջել, ո՛չ Արցախն էինք հանձնել, ո՛չ էլ այդքան զոհեր էինք տվել, բայց մարդիկ, միեւնույն է, խիստ դժգոհ էին: Եթե դա է խաղաղության գինը, ապա պետք է ֆիքսենք, որ այն մարդկանց չի հրապուրում:

- Այս հարցումներն ուրիշ ինչի՞ մասին են հուշում:

- Առայժմ պատկերն այն է, որ մարդիկ շատ հիասթափված են եւ չեն ուզում գնալ ընտրությունների: Սա է խնդիրը: Մարդիկ հիասթափված են եւ իշխանությունից, եւ ընդդիմությունից, եւ, առհասարակ, բոլոր կուսակցություններից: Չունեն վստահություն, հավատ: Այս ամենի արդյունքում, եթե ընտրողների 30-40 տոկոսը միայն մասնակցի ընտրություններին, ինչը շատ ցածր է, ապա իրավիճակն էլ խիստ անորոշ է:



Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՔՊ-Ի ՆԵՐՍՈՒՄ ԴԱԺԱՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ Է

Իշխող կուսակցությունում զեղծարարների փնտրտուքն ու չեզոքացման գործընթացը շարունակվում են: Հունիսի 7-ի ընտրությունների նախընտրական ցուցակը ձեւավորելու նպատակով, ինչպես հայտնի է, ՔՊ-ում նախորդ շաբաթ ներկուսակցական ընտրություններ անցկացվեցին, պատգամավորի թեկնածության հայտ ներկայացրած 276 թեկնածուներին ավելի քան 1000 պատվիրակ իր ընտրությամբ «դասավորեց» ցուցակում: Բայց ցուցակի կազմման երկրորդ փուլ է նախատեսված: Այդ 1000 ՔՊ-ականները մի հատ էլ առաջին տեղերը զբաղեցրած 50 հոգու միջեւ պետք է ընտրություն կատարեն, որոշեն նաեւ վարչապետի թեկնածուին:

Եվ քանի որ առաջին փուլի ընտրություններից առաջ արգելված էր քարոզչություն անելը, սակայն ոմանց ստացած ձայները կասկածի տեղիք են տվել, որ նրանք, չնայած արգելքին, քարոզչություն են արել պատվիրակների շրջանում, ուստի ՔՊ-ում սկսվել է «ռազբիրատների» եւ զտումների շրջանը: Մենք մի քանի հրապարակում ենք ունեցել այս մասին, գրել ենք, որ նախկին պատգամավոր Կարեն Գրիգորյանին հեռացրել են ցուցակից՝ պարզելով, որ նա արգելված քարոզչություն է արել. պատվիրակներին խնդրել է իրեն ընտրել, նախօրեին էլ ՔՊ վարչությունը պատգամավոր Դավիթ Դանիելյանին հեռացրեց՝ դարձյալ նույն պատճառով:

Խնդրահարույց են նաեւ 50-րդ տեղը զբաղեցրած, Վայքի տարածքային կառույցի ներկայացուցիչ Հայկ Ավագյանի ձայները: Երեկ տեղեկացանք, որ կասկածյալների ցանկն օրեցօր ավելանում է, ՔՊ վարչությունը դիտարկում է այլ թեկնածուների եւս հանել ցուցակից, որոնց ձայները խիստ կասկածելի են թվում: Նրանցից մեկն Արագածոտնի փոխմարզպետ Միլադա Հովհաննիսյանն է, որը 52-րդ հորիզոնականում է՝ հետեւում թողնելով ՔՊ-ական ակտիվ կանանց՝ Լուլուին եւ Արփի Դավոյանին, սակայն կանանց պարտադիր քվոտան լրացնելու համար նա, ըստ էության, անցնում է 50-յակ, բայց մեզ ասացին, որ նրա հարցը դեռ պետք է քննարկեն:

Վերադառնալով ՔՊ վարչության նախորդ օրվա նիստին, որի ընթացքում քննարկել են Դավիթ Դանիելյանի հարցը, մեզ պատմեցին, որ վարչության բոլոր անդամները, առանց բացառության, կողմ են քվեարկել Դանիելյանին ընդհանրապես ցուցակից հանելու առաջարկին, անգամ՝ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, որի հովանավորյալն է Դավիթ Դանիելյանը: Ըստ մեր աղբյուրի՝ Հարությունյանը, հասկանալով, որ ամեն բան ջրի երես է դուրս եկել, որոշել է ձեռքերը լվանալ ու առանց պաշտպանության թողել իր մտերիմին. բանն այն է, որ, մեր աղբյուրի խոսքով, Դանիելյանի նկատմամբ բացասական վերաբերմունքը ոչ միայն ներկուսակցական ընտրություններում զեղծարարություններով է պայմանավորված եղել, այլեւ, որ սկսել է հարցեր լուծել ինչ-ինչ շրջանակների համար, գուցե՝ նաեւ իր հովանավորի միջոցով, ինչն էլ զայրացրել է Փաշինյանին, ու, բնականաբար, թիմում նման վերաբերմունք է ձեւավորվել: Օրինակ, Քաջարանի համայնքապետ Մանվել Փարամազյանի միջնորդն է եղել կառավարությունում եւ աջակցել է ինչ-ինչ հարցերում: Նշենք, որ Փարամազյանի կինն «Աժդանակ» ՍՊԸ-ի բաժնետերերից է, որը զբաղվում է նաեւ հանքերի շահագործմամբ:

Իսկ բուն քվեարկությունների զեղծարարության մասով Դավիթ Դանիելյանի առաջ են դրել sms հաղորդագրությունների պատճեններ՝ ուղարկված պատվիրակներին, որոնցով խնդրել է իրեն ընտրել: Նաեւ պարզել են, որ ոմանց հետ էլ հեռախոսային զրույցներ է ունեցել, ընդ որում՝ այս ամենը սկսել է դեռ տարեսկզբին, երբ շարքերին, կարելի է ասել, հայտնի չի եղել, թե ինչ սկզբունքով է ձեւավորվելու ցուցակը, եւ միայն Փաշինյանի նեղ շրջապատում կարող էին այդ մասին իմանալ: Դավիթ Դանիելյանն ընդունել է մեղքը եւ վարչության որոշումը՝ իրեն հեռացնելու վերաբերյալ: Սակայն, ասում են, բավական ծանր է տարել, երեկվանից ոչ մեկի հետ չի շփվում, նիստին էլ գնացել է՝ հույս ունենալով, որ ՔՊ վերնախավից ոմանք իրեն կաջակցեն:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԱՄՆ

ԱՐԴՅՈ՞Ք ՊԱՏԵՐԱԶՄՆ ԻՐԱՆՈՒՄ ՇՈՒՏՈՎ ԿԱՎԱՐՏՎԻ

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

Ռակառակ բոլոր խոսակցություններին, թե փետրվարի 28-ից ԱՄՆ-ի, Իսրայելի եւ Իրանի միջեւ ընթացող պատերազմը կարող է տեւել շաբաթներ, կարծում եմ, որ այն հաջորդ շաբաթ կավարտվի: Այս ռազմական բախումն էլ օրերի թվով է մնալու պատմության մեջ, ինչպես 2025-ի ամռան բախումը, որտեղ նույնպես Վաշինգտոնը, Թել-Ավիվը եւ Թեհրանն էին ներգրավված: Ավելի ստույգ՝ ոչ թե պատերազմը հաջորդ շաբաթ կավարտվի, այլ՝ ռազմական գործողությունների ընթացիկ փուլը: Տրամաբանական է, որ աշնանը կամ հաջորդ տարի լինի բախումների հաջորդ ռաունդը, որը ծավալվի արդեն հիմնականում Իրանի եւ Իսրայելի միջեւ, եւ որտեղ Իրանի հետ ռազմական դիմակայության մեջ հայտնվի նաեւ Ադրբեջանը: Սակայն դա՝ ամիսներ հետո:

Բախումների ներկա ռաունդը, մեծ հավանականությամբ, սադրել է Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն, բայց ԱՄՆ ուժերը ռազմական գործողություններից ավելի պահպանողական մեկը, քան այաթոլլա Ալի Խամենեին էր, եւ, վերջապես, զվարճալի հավաստիացումները, թե ԱՄՆ-ն արդեն իսպառ վերացրել է Իրանի նավատորմը, օդային պաշտպանական համակարգերը, տարբեր տրամաչափերի ու հեռահարության հրթիռները, ռազմական ղեկավարությանը, գլխատել է այաթոլլաների իշխանությունը, վերացրել միջուկային զենքի հետ կապված կարողությունները, հրթիռների արձակող սարքավորումները... միով բանիվ, Թրամփի բառերով՝ «ԱՄՆ-ն Իրանում վերացրել է ամեն ինչ», կամա թե ակամա, իրանական արշավանքն ավարտելու մտայնությունն էին մատնում:

Եթե ամենը, ինչ հարկավոր էր վերացնել, այլեւս վերացված է, ապա ԱՄՆ-ն այլեւս ի՞նչ պատճառ ունի մնալու Իրանում, երբ զինուժի ու ռազմական տեխնիկայի ներկա կուտակմամբ յուրաքանչյուր անցնող օրը ԱՄՆ բյուջեին հարյուր միլիոնավոր դոլարներ է արժենում: Այստեղ փոքր նշանակություն ունի այն, որ իրականում ԱՄՆ-ն Իրանում շատ քիչ բան կարող է վերացրած լինել, էականը՝ Թրամփը հայտարարում է եւ ցանկանում է հավատալ, որ ամեն ինչ վերացրել են՝ այն աստիճան, որ այլեւս անելիք չունեն: Հոգեբանորեն Թրամփն այլեւս Իրանից դուրս գալու տրամադրության եւ մտածողության մեջ է: Ճիշտ՝ ինչպես հունվարին Իրանի դեմ հարձակում սկսելու պահին:

Թրամփի անձնական մոտեցումները եւ ընկալումները որոշիչ գործոն են այն որոշումներում, որոնք կայացնողն ինքն է: Դա փաստ է: Սակայն Թրամփի սուբյեկտիվ գործոնից բացի, օբյեկտիվորեն էլ Իրանում ԱՄՆ-ի մնալը եւ անիմաստ աջուձախ ռմբակոծելը տեղում դոփելու ընթացք է: Ինչ վերաբերում է հրթիռներ, միջուկային ծրագրեր վերցնելուն, դրանք ոչ մի կերպ չչափվող, ոչ մի կերպ չստուգվող հայտարարություններ են: Երբ ուզեն, կասեն՝ վերացրինք, ավարտեցինք, ինչպես 2025-ի ամռան բախումից հետո Թրամփն ու իր ողջ անտուրաժը հայտարարում, հավատացնում էին, թե Իրանի բոլոր միջուկային կարողությունների ու ծրագրերի վրա շիրմաքար են դրել: Կես տարի անց նորից Իրանում են նույն գործով՝ Իրանի հրթիռային եւ միջուկային կարողությունների վրա շիրմաքար դնելու: Այդ թեմայում ոչ մի օբյեկտիվ չափում եւ տեսանելի արտահայտություն չկա:

Օբյեկտիվորեն տեսանելի կամ չափելի կարող էր լինել միայն այաթոլլաների ռեժիմի տապալումը, որը, ի մեծ դժբախտություն Նեթանյահուի, տեսանելի ապագայում՝ մինչեւ Իսրայելի առաջիկա խորհրդարանական ընտրությունները եւ դրանից հետո էլ, չի լինի: Հետեւաբար, մնում է բավարարվել նրանով, ինչ արվեց՝ Իրանի գերագույն առաջնորդի եւ բարձրաստիճան զինվորականների չեզոքացմամբ եւ երկրի ռազմական կարողություններին հասցված վնասով: Գոնե ԱՄՆ-ի համար ժամանակն է՝ ռազմական թատերաբեմից դուրս գալու, չարվածը թողնելով Իրանի ժողովրդին: Անկախ հակասող հայտարարություններով ստեղծվող խառնաշփոթից, ԱՄՆ-ում տեսանելի եւ զգալի է, որ Իրանից դուրս գալն են նախապատրաստում՝ անդադրում կրկնելով, թե ամեն ինչ Իրանում վերացրել են:

Հավանաբար, մի քանի օր էլ Վաշինգտոնում ոտքը կախ կգցեն՝ տեսնելու համար, թե արդյոք Իսրայելին հաջողվո՞ւմ է Իրաքի քրդաբնակ շրջաններից ուժեր մտցնել Իրանի քրդաբնակ շրջաններ եւ խժդժություններ բարձրացնել՝ հաշվարկով, որ այն տարածվի նաեւ Իրանի մնացյալ շրջաններում, բայց սա օրերի ընթացքում կպարզվի: Հաշվարկի ձախողվելու պարագայում այլեւս մնալն իմաստ չունի: Իսկ ձախողումը շատ հավանական է, քանի որ, դատելով քրդերի՝ տարբեր երկրներից արվող հայտարարություններից, նրանք այնքան էլ չեն ցանկանում թնդանոթի միս ծառայել ԱՄՆ ցամաքային ռազմական գործողություններում: Մանավանդ, որ Իրանը ժամանակ չի կորցնում Իրաքի քրդերին մի կողմից նախազգուշացնելու, մյուս կողմից՝ հարվածելու, սահմանին էլ ցամաքային ուժերի հատուկ գործողություններ է իրականացնում:

Իսկ մարտի 5-ին, երբ քրդերի միջոցով բախումներ սադրելու եւ Իրանում ներքին ապակայունություն ստեղծելու ջանքերում առանձնապես հաջողության չհասնելուց հետո Իսրայելը մի բան էլ Նախիջեւանին էր հարվածել՝ հավանաբար, Բաքու-Թեհրան բախում եւ Իրանի՝ ազերիներով բնակեցված շրջաններում խժդժություններ գեներացնելու հույսով, դա արդեն Իսրայելի ցունգցվանգային վիճակի մատնություն է: Եթե Թեհրանը լիներ Ադրբեջանին հարվածողը, ինչո՞ւ պետք է հարվածեր Նախիջեւանին եւ ոչ թե Ֆիզուլի, Ջեբրաիլում տեղակայված իսրայելական լրտեսական ցանցին ու կարողություններին: Ադրբեջանն անպատճառ դառնալու է Իրան-Իսրայել բախման թատերաբեմ, բայց ո՛չ այս ռաունդում, որը գնում է վերջաբանի:

ԱՄՆ-Իսրայել-Իրան բախման ներկա ռաունդում կարող են նոր զոհեր եւ ավերածություններ լինել, բայց ո՛չ նոր որակական զարգացումներ: Եվ այն, որ Ծոցի երկրները հետզհետե սկսում են վերականգնել օդային թռիչքները, ռազմական գործողությունների վերջաբանի նշան եւ հավանականություն են:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է՝ ՆԱԽԿԻՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻՆ ՀԱՆԳԻՍՏ ԹՈՂՆԵԼ

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազությունն ակտիվորեն իրականացնում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացներ, որոնք ուղղված են նախկին պաշտոնյաների դեմ, որոնց մեծ մասն այսօր ընդդիմություն է: Դատարանից պահանջում է բռնագանձել անշարժ եւ շարժական գույք, գումար, բաժնեմասեր, սակայն 4-5 տարվա ընթացքում դատարանի օրինական ուժի մեջ մտած 1 վճիռ կա, այն էլ՝ չնչին գումարի չափով. «Երեւանի Վարդանանց փողոցում գտնվող 1 բնակարանի եւ Կոտայքի մարզի Առինջ համայնքում գտնվող 1 բնակելի տան նկատմամբ, որոնց ընդհանուր միջին շուկայական արժեքը կազմում է 300 միլիոն 650.000 դրամ (շուրջ 750.000 դոլար): Բացի այդ, Վերականգնված միջոցների միասնական հաշվին փոխանցվել է 50.000 եվրոյին համարժեք 20 միլիոն 634.000 դրամ եւ 878.000 դրամ»: Ապօրինի գույքի բռնագանձման շրջանակներում հաշտության 9 համաձայնություն է կնքվել՝ մարդիկ կամովին հանձնել են գույքի մի մասը, որ դատական քաշքշուկներից զերծ մնան: Դա էլ կազմել է 5 միլիարդ 126 մլն դրամ:

Սակայն ապօրինի գույքի բռնագրավման գործընթացները չեն վերաբերում իշխանության կողմնակից նախկիններին, առավել եւս՝ ներկայիս պաշտոնյաներին, որոնք հարստացել են վերջին 8 տարում, եւ որոնց մասին բազմաթիվ հրապարակումներ կան: Օրերս էլ ուշագրավ դեպքի ականատես եղանք. Նիկոլ Փաշինյանը ներկուսակցական քարոզարշավի շրջանակներում քայլում էր Արտաշատի փողոցներով, եւ երբ քաղաքապետ Կառլեն Մկրտչյանը մատնացույց արեց մոտակա շենքը, թե սա նախկին ոստիկանապետ Արամ Հովհաննիսյանին է (իր ձեւակերպմամբ՝ «մեր Արամինը»), Փաշինյանը խփեց նրա ձեռքին, թե՝ մի ասա:

Հինգշաբթի օրը, կառավարության նիստից հետո մենք հարց ուղղեցինք Փաշինյանին՝ ինչո՞ւ էիք «բզում» Արտաշատի քաղաքապետին, որ չխոսի «ձեր Արամի» շենքի մասին, փորձում էիք թաքցնե՞լ Ձեր իշխանության ժամանակ բարձրաստիճան ոստիկանի ենթադրյալ թալանը: Վարչապետը տարօրինակ պատասխան տվեց. «Դա ռեակցիա էր ուղղակի: Արամ Հովհաննիսյանը պաշտոնյա չի, եւ երբեմն նախկին պաշտոնյաներին պետք է թողնել հանգիստ՝ իրենց կյանքով ապրելու, առավել եւս, որ այդ շենքը կառուցվել է 15-20 տարի առաջ, երբ Արամ Հովհաննիսյանը չգիտեմ որտեղ է աշխատելիս եղել»:

Շատ արտառոց հնչեց նախկին պաշտոնյաներին հանգիստ թողնելու կոչը, այդ դեպքում ինչո՞ւ հանգիստ չեն թողնում 2018-ից առաջ աշխատած նախկիններին: Այսինքն, նախկիններն էլ են դասակարգել՝ նախկիններ, որոնց կարելի է հանգիստ չթողնել, եւ նախկիններ, որոնց պետք է հանգիստ թողնել: Օրինակ, Զառիթափ համայնքի նախկին ղեկավար Սիմոն Բաբայանից, որի դեմ դատախազությունը նախորդ տարի հայց է ներկայացրել՝ պահանջելով մի քանի անշարժ գույք եւ ավելի քան 83 միլիոն դրամ՝ որպես ապօրինի միջոց, նախկի՞ն պաշտոնյա է, թե՝ ոչ: Հարցն ուղղեցինք Բաբայանին: Նա ասաց, որ ինքն այլեւս չի զբաղվում քաղաքականությամբ, հող է մշակում: Իսկ իր միջոցների օրինական-անօրինական լինելու վերաբերյալ էլ ասաց. «Արդեն վերջանում ա, ես ապօրինի գույք չունեմ, ինչ կա՝ օրինական հաստատված ա»:

Դատախազությունը գույքի բռնագրավման հայցեր է ներկայացրել նաեւ Դավիթ Հարությունյանի, Հովիկ Աբրահամյանի, դաշնակցական նախկին պաշտոնյաների՝ Լեւոն Մկրտչյանի, Աղվան Վարդանյանի, Իշխան Սաղաթելյանի դեմ, որից դատախազությունը պահանջում է բռնագանձել անշարժ եւ շարժական գույքեր, շուրջ 700 հազար դոլարին համարժեք դրամ: **Իշխան Սաղաթելյանն** իր դեմ ներկայացված հայցի մասով ասաց. «Սա դասական քաղաքական հետապնդում է, ես այս երկրում բարձր պաշտոն չեմ ունեցել՝ 4 ամիս, 2018 թվից հետո: Եթե մտածում են՝ ես 4 ամսվա մեջ կարողացել եմ ապօրինի հարստանալ, ուրեմն լիքը մտածելու բան ունեն: Սա քաղաքական հետապնդման գործիք է, կիրառվում է այդ նպատակով, նաեւ՝ մարդկանց մոլորեցնելու, այսպիսի նյութերով կերակրելու նպատակով: Ես բացարձակ մտահոգություն չունեմ այդ մասով, ինչը որ կա, էժանագին շոու է, գործը դատական պրոցեսով կգնա, շատ արագ կպայթի, որովհետեւ մարդ պետք է պաշտոն, դիրք ունենա, որ կարողանա... Ինձ չեն մեղադրում հարկ թաքցնելու, կաշառք տալու-վերցնելու, պաշտոնեական դիրք չարաշահելու մեջ, ուղղակի ասում են՝ ինչ-որ գույք ունես, որ ապօրինի է, արի ապացուցի: Ես էլ կապացուցեմ, ուղղակի այս ընթացքում շոու է, խեղկատակություն, որն անում են: Գումարային պահանջն էլ իմ ընկերություններից ստացված եկամուտն է, որի մասին ամեն տարի հայտարարագրել եմ: Իրականում, շատ անհարմար վիճակում են հայտնվելու»:

ՀԱՐՁԱԿՈՒՄ

ԻՆՉՈՒ ԱՄՆ-Ն ՊԱՏԵՐԱԶՄ ՍԿՍԵՑ ԻՐԱՆԻ ԴԵՄ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՌԱԶՄԱԿԱՆ

Շատերի մոտ կա այն թյուր տպավորությունը, թե Միացյալ Նահանգները պատերազմ սկսեց Իրանի դեմ Իսրայելի դրդմամբ. Իսրայելն Իրանի գոյության մեջ տեսնում է գոյութենաբանական վտանգ, Իրանը չի ճանաչում Իսրայել պետության գոյությունը եւ եթե Իրանը տիրապետեր միջուկային զենքի, ապա այն կարող էր օգտագործել Իսրայելը ոչնչացնելու համար, մանավանդ որ այդ երկիրը բավական փոքր է, եւ մի քանի տասնյակ միջուկային մարտագլխիկները բավարար կլինեին Իսրայել պետությունը կործանելու համար: Բայց եթե իրականում վտանգը լիներ Իրանի միջուկային տեխնոլոգիաներից, այդ հարցը կարելի կլիներ լուծել խաղաղ բանակցությունների միջոցով, Իրանը պատրաստ էր միջազգային հսկողության տակ դնել իր միջուկային օբյեկտները՝ իր նկատմամբ կիրառվող պատժամիջոցների վերացման դիմաց: Մինչդեռ Միացյալ Նահանգներին պետք է Իրանի նկատմամբ ամբողջական վերահսկողություն, պետք է այնտեղ հաստատվի մարիոնետային իշխանություն, այդ երկրի տարածքում տեղակայվեն ամերիկյան բազաներ, երկիրը հայտնվի ամերիկյան տոտալ հսկողության տակ: Քանի որ ԱՄՆ-ի եւ Իսրայելի քաղաքական ու հատկապես տնտեսական էլիտաները միասնական են, ունեն միասնական շահեր, նրանք ձգտում են պահպանել ամերիկյան համաշխարհային տիրապետությունը:

Սառը պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ում եկան եզրակացության, որ իրենց ռազմական հիմնական հակառակորդը՝ Խորհրդային Միությունը, ոչնչացված է, եւ այլեւս որեւէ երկիր չունի այն ռազմական եւ տնտեսական ներուժը, որ վտանգ ներկայացնի իրենց համաշխարհային գերիշխանությանը: Ըստ այդմ, քանի որ հիմնական ռազմական հակառակորդը ջախջախված է, հիմա աշխարհին կարելի է տիրել ավելի քաղաքակիրթ մեթոդներով, տնտեսական ազդեցությամբ: ԱՄՆ-ում համոզված էին, որ իրենց տնտեսական կշիռը եւ ազդեցությունը բավարար կլինեն համաշխարհային գերիշխանության համար, բանակը եւ զինված ուժերը մղվեցին երկրորդ պլան՝ ավելի երկրորդական խնդիրներ լուծելու համար: Ի՞նչ է նշանակում տնտեսական գերիշխանություն. դոլարի ազդեցություն՝ որպես համաշխարհային վճարամիջոցի, ամերիկյան տնտեսությունը, լինելով ամենամեծը, նաեւ ամենամրցունակն է, հետեւաբար, մյուս երկրները տնտեսական կախվածություն ունեն ԱՄՆ-ից, Համաշխարհային բանկի եւ Արժույթի միջազգային հիմնադրամի միջոցով ԱՄՆ-ն վերահսկողություն է հաստատում այդ երկրների տնտեսությունների եւ ֆինանսների նկատմամբ, որոշում նրանց տնտեսական եւ ֆինանսավարկային քաղաքականությունը՝ դրանք ծառայեցնելով իր շահերին: Ավելի պարզ ասած՝ աշխարհին ընկնում է ԱՄՆ-ից տնտեսական կախվածության մեջ, եւ այդ կախվածությունը բավարար է՝ նրանց վերահսկելու եւ կառավարելու համար:

Այդ վիճակը տեւեց ընդամենը 10-15 տարի, քանի որ 2000-ականների կեսերից Չինաստանի տնտեսությունը սկսեց թափ հավաքել եւ սպառնալ ամերիկյան տնտեսական գերիշխանությանը: Տարեցտարի Չինաստանի տնտեսությունը սկսեց ավելի մեծանալ, իսկ ամերիկյան տնտեսությունը, հակառակը՝ փոքրանալ: Բազմաթիվ երկրների համար Չինաստանը դարձավ հիմնական առեւտրատնտեսական գործընկեր, ավելի մեծ թվով երկրներ սկսեցին վարկեր վերցնել ոչ թե միջազգային ֆինանսական կազմակերպություններից, այլ Չինաստանից, ինչի արդյունքում առաջացավ ֆինանսական կախվածություն Չինաստանից: ԱՄՆ-ի կախվածությունից ազատվելու փորձ անող երկրները, ի դեմս Չինաստանի, տեսան այն բեւեռը, որի շուրջ հնարավոր է համախմբվել եւ պաշտպանվել ամերիկյան միակողմանի կախվածությունից: Չինաստանը՝ ինքը եւս դեմ էր՝ ստեղծելու մի այնպիսի համակարգ, որտեղ միավորված կլինեին ամերիկյան գերիշխանության դեմ պայքարող երկրները, դաշնակիցներով ավելի հեշտ կլիներ դիմակայել ԱՄՆ-ին: Արդյունքում ստեղծվեց Շանհայյան համագործակցության կազմակերպությունը՝ ԲՐԻԿՍ-ը:

ԱՄՆ-ն հետեւում էր այդ զարգացումներին եւ հասկանում, որ դրանք տանում են իր ազդեցության թուլացմանը, եւ որպես հետեւանք՝ կարող է կորցնել համաշխարհային առաջնորդությունը: Քանի որ տնտեսական մեխանիզմներով հնարավոր չեղավ ճնշել Չինաստանին, մաքսատուրքերը, տարբեր պատժամիջոցներն ընդամենը կարճաժամկետ ազդեցություն էին թողնում, բայց չէին լուծում հիմնական խնդիրը՝ Չինաստանի տնտեսական ազդեցության ոչնչացում, տնտեսության զարգացման սառեցում: Միացյալ Նահանգները որոշեց, որ քանի դեռ բանը բանից չի անցել, պետք է օգտագործել սեփական զինված ուժերը՝ բանակը, ռազմական գերիշխանություն հաստատելու համար:

Քանի դեռ Չինաստանը ռազմական առումով թույլ է կամ առնվազն բավարար համարձակություն չունի՝ պաշտպանելու իր դաշնակից երկրներին, ԱՄՆ-ն կարող է ռազմական գերիշխանություն հաստատել դրանցից յուրաքանչյուրի նկատմամբ: Առաջին հարվածը հասցվեց Վենեսուելային, որը Չինաստանի նավթի հիմնական մատակարարներից էր: Այդ երկրում հաստատվեց պրոամերիկյան իշխանություն, համենայնդեպս, նոր իշխանությունները գործում են Վաշինգտոնից իջեցված ցուցումով եւ չեն համարձակվում հակադրվել ԱՄՆ իշխանություններին՝ իրենց եւս կարող են առեւանգել եւ դատել ամերիկյան դատարաններում:

Հաջորդն Իրանն է, որը եւս Չինաստանի նավթի եւ այլ հանքահումքային նյութերի մատակարարն է: Չինաստանը դատապարտեց Իրանի դեմ ԱՄՆ-ի եւ Իսրայելի ագրեսիան, բայց չունի բավարար ռազմական ուժ եւ համարձակություն՝ Իրանի կողմից, ընդդեմ ԱՄՆ-ի, պատերազմի մեջ ներգրավվելու: Չինաստանը նույնիսկ բացահայտ ռազմական օժանդակություն չի տրամադրում Իրանին: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա այդ երկիրն «ալիբի» ունի՝ ինքն էլ է պատերազմի մեջ եւ, հետեւաբար, ռեսուրսների խնդիր ունի: Մյուս կողմից Ռուսաստանն աշխարհաքաղաքական բեւեռի հավակնություններ չունի, նա եւս թաքնվում է Չինաստանի ստվերի տակ, եւ հիմնական թիրախն էլ Չինաստանն է:

Իրանի դեմ պատերազմը հնարավորություն է՝ պատժելու մի շարք այլ երկրների եւս, որոնք փորձում էին ամերիկյան գերիշխանությանն այլընտրանք գտնել, դիվերսիֆիկացնել իրենց տնտեսական, քաղաքական եւ ռազմական կախվածությունն ԱՄՆ-ից: Իրանի հարվածներն Սաուդյան Արաբիայում գտնվող նավթի պահեստներին, Արաբական Միացյալ Էմիրություններում գտնվող թիրախները այդ երկրներին հիշեցնում են, որ իրենք եւս կարող են կորուստներ կրել եւ ամենեւին պաշտպանված չեն: Այս երկրները համարձակություն էին ունեցել միանալ ԲՐԻԿՍ-ին: Մի կողմից, նրանք պատժվում են որպես ԱՄՆ-ի սատելիտներ, Իրանը նրանց հարվածում է ԱՄՆ դաշնակից լինելու համար, այդ երկրներում ամերիկյան ներկայության համար, բայց, մյուս կողմից, այդ հարվածները ոչնչացնում են ԲՐԻԿՍ-ը. ինչո՞ւ է նույն ԲՐԻԿՍ-ի անդամ Իրանը հարվածում նրանց, ինչո՞ւ կազմակերպության մյուս անդամները չեն միջամտում կամ միջնորդում:

ԱՄՆ-ն վերադառնում է հին եւ փորձված մոդելին. եթե որեւէ տարածքի եւ երկրի նկատմամբ կա ռազմական վերահսկողություն, կա նաեւ տնտեսական վերահսկողություն եւ շահագործում, առանց դրա վերահսկողությունը կատարյալ չէ: ԱՄՆ-ն չսպասեց, մինչեւ իր թշնամիներն ուժ հավաքեն եւ հանդես գան միասնական ճակատով, նա նրանցից յուրաքանչյուրին փորձում է պատժել առանձին-առանձին: Կհաղթի այդ պատերազմներում՝ կպահպանի համաշխարհային հեգեմոնի դերը, կպարտվի՝ կկորցնի:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԱՆՈՒՂՂԵԼԻ ՍՐԲԱԶԱՆԸ ԵՎ ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏԻ ՃԱՆՃԵՐԸ

Զրշակ սրբազանն ազատ արձակվեց: Արդար է: Գոնե վերջին 7 տարիներին մարդուն ոչ մի քրեորեն պատժելի արարք չէր մեղսագրվում՝ ըստ փաստաբանների: Բայց երեւի փաստաբան պետք չէ լինել՝ իրադարձությունների ընթացքին գնահատական տալու համար: Բանն այսպես է պատահել. 2025 թ. դեկտեմբերի 4-ին Մայր Աթոռի դիվանապետ Արշակ արքեպիսկոպոս Խաչատրյանին ձերբակալեցին Քննչական կոմիտեի շենքում, որտեղ նա հրավիրվել էր համացանցում տարածված մի կասկածելի տեսանյութի վերաբերյալ հարցաքննության: Հարցաքննությունը, ըստ երեւույթին, պատրվակ էր, քանի որ ԱԱԾ աշխատակիցների ներկայացրած ձերբակալման մասին որոշումը տեսանյութի հետ կապ չունեցող գործով էր, ՔՕ 393-րդ հոդվածով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ թմրամիջոց ապօրինի իրացնելը՝ հանդիսադիր վայրում): Ավելի պարզ. Արշակ արքեպիսկոպոսին մեղադրում են, որ նա այլ անձի միջոցով թմրամիջոց է դրել Գարեգին Բ կաթողիկոսի հրաժարականը պահանջող «Նոր Հայաստան, նոր Հայրապետ» շարժման ակտիվիստի պայուսակի մեջ, որն ասել է, որ, իր կարծիքով, թմրանյութն ինչ-որ մեկն է գցել՝ Արշակ սրբազանի ցուցումով:

Մեկ անգամ եւս շեշտեմ՝ այս ամենը տեղի է ունեցել, ավելի հավանական է՝ չի էլ ունեցել, 7 տարի առաջ՝ 2018-ին: Եվ հանկարծ 2025-ին, երբ Եկեղեցու դեմ պայքարը մտել էր էպիկական փուլ, հիշեցին այս գործը եւ սրբազանին կալանավորեցին: Բայց հետո լուր տարածվեց, որ արդեն առ ոչինչ է մի հին հանգամանք. «Հրապարակի» հաղորդմամբ՝ Քննչական կոմիտեի Արմավիրի բաժնում պահվող մարիխուանայի գլանակը չկա՝ կորել է անհասկանալի հանգամանքներում: Ինչպես՝ չեն բացատրում, ենթադրվում է՝ այսպես ասած, երբ ծխվում է վերջին գլանակը, գործը փակվում է: Քննիչները պաշտոնապես չեն հաստատել եւ չեն էլ հերքել այդ տեղեկությունները, փաստաբաններն էլ դա գնահատում են մեկ բառով՝ «աբսուրդ»:

Իսկ երեկ սրբազանին ազատ արձակեցին Վերաքննիչ դատարանի դատավոր Ա. Նիկողոսյանի որոշմամբ: Նրա նկատմամբ կիրառվել է վարչական վերահսկողություն, ինչը նույնպես, փաստաբանների գնահատմամբ, արդար չէ: Եվ ահա, Արշակ սրբազանը՝անվրդով դեմքով, դուրս եկավ ԱԱԾ մեկուսարանից, ամենեւին չընկճված եւ բոլորովին չուղղված եւ ընդգծեց. «Բոլոր սցենարներն էլ հաշվարկված եղել են, բայց անակնկալներ կային: Ես հիշում եմ, որ կալանավայրերն ասում էին ուղղիչ աշխատանքային գաղութներ: Ուրախ եմ ասել, որ ես անուղղելի եմ մնացել. իմ հայացքների եւ դիրքորոշումների մեջ ոչինչ չի փոխվել: Վերջը լավ է լինելու. եթե լավ չէ, ուրեմն վերջը չէ»:

Այո, վերջը չէ: Ազատազրկման վայրում է Բագրատ սրբազանը, Արշակ սրբազանի ամենամեծ ափսոսանքն այն է, որ նա խցում մենակ մնաց: Իսկ վերջինս ուրախ է, որ մենակ է մնում: «Ես արդեն դուրս գալիս իրեն ասացի՝ վերադառնամ, այստեղ չլինես: Ողջույններ Արշակ սրբազանին»,- դատարանի դահլիճում Արշակ սրբազանի ազատման լուրին արձագանքեց Բագրատ սրբազանը: Արդյո՞ք Արշակ սրբազանն իրեն տեւական ժամանակ անհիմն մեկուսացնելու համար բողոք կներկայացնի՝ իրեն վարկաբեկելու, կեղծ տեսանյութով համբավն արատավորելու համար: Իրականում՝ ոչ, նա չի պատրաստվում որեւէ բան հերքել եւ ապացուցել՝ իմաստ չի տեսնում: «Ո՞ւմ համար հերքեմ»: Արդարադատությանը չի վստահում, իսկ հանրային ընկալումներում հերքման անհրաժեշտություն չի տեսնում: «Երեւույթներ կան, որ հիշեցնում են գարնանամուտին ձմեռային ցրտից արթնացած ճանճի շարժումներ, որոնք որեւէ տրամաբանության մեջ չեն տեղավորվում: Հիմա երբեմն իշխանությունների գործելաոճն ինձ դա է հիշեցնում…»:

Շաբե ԱՎՈՅԱՆ

ԻՐԱՆ

ԲԵՄԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ, ԱԼԻԵՎԻ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ՑԻՆԻԿ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Մարտի 5-ին նախ ադրբեջանական ԶԼՄ-ները, ապա նաեւ երկրի ԱԳՆ-ն ու ՊՆ-ն հայտարարեցին, թե Իրանի կողմից ԱԹՍ-ներով հարձակում է տեղի ունեցել Նախիջեւանի միջազգային օդանավակայանի, հարակից դպրոցի եւ այլ ենթակառուցվածքների վրա, որի հետեւանքով վնասվել է օդակայանի տերմինալի շենքը, տարհանվել են ուսուցիչներն ու աշակերտները, վիրավորվել է 4 խաղաղ բնակիչ: ԶԼՄ-ների հակաիրանական քինոտ հրապարակումներին զուգահեռ, ադրբեջանական գերատեսչությունները բավականին կոշտ հայտարարությամբ հանդես եկան՝ ակնարկելով համարժեք գործողությունների, իմա՝ հակահարված տալու մասին:

Բայց Իրանի դեմ մաղձի գագաթնակետն Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հոխորտանքներն ու ռազմատենչ սպառնալիքներն էին, որոնք նա հնչեցրեց նույն օրը երկրի Ախ նիստում: Իսկ Նախիջեւանի միջադեպը, որի հետ կապված՝ Իրանի ԱԳՆ-ն եւ ԳԾ-ն, անձամբ ԱԳ նախարար Արաղչին հատուկ հայտարարությամբ հերքեցին իրանական կողմի առնչությունը, ըստ էության, մի վտանգավոր խաղի բեմադրություն էր:

Իրեն տրված հերթական առիթն օգտագործելով, մի քանի օր առաջ Իրանի դեսպանատան գրանցամատյանում այդ երկրին ցավակցական խոսքեր հղելուց հետո, Ալիեւը նույն ԻԻՀ իշխանություններին որակել է էլ «ահաբեկիչ», էլ «անշնորհակալ», էլ «դավաճան»: Ախ նիստում նա հայտարարեց. «Այսօր Իրանն ահաբեկչական ակտ է իրականացրել Ադրբեջանի տարածքի եւ ադրբեջանական պետության դեմ: Ադրբեջանական պետությունը խստորեն դատապարտում է այս նողկալի ահաբեկչական գործողությունը. այն կատարողները պետք է անհապաղ պատասխանատվության ենթարկվեն: Իրանի պաշտոնյաները պետք է բացատրություն տան ադրբեջանական կողմին, ներողություն խնդրեն, եւ այս ահաբեկչական հարձակման համար պատասխանատուները պետք է քրեական պատասխանատվության ենթարկվեն: Սա առաջին դեպքը չէ, որ Իրանն ահաբեկչական գործողություններ է իրականացնում Ադրբեջանի եւ ադրբեջանցիների դեմ: Մենք՝ բոլորս, լավ ենք հիշում Թեհրանում Ադրբեջանի դեսպանատան վրա վերջերս տեղի ունեցած ահաբեկչական հարձակումը»,- ասել է Ադրբեջանի նախագահը: Ինչպես միշտ, չի շրջանցել նաեւ հայկական թեման՝ խոստանալով «ջարդել» բոլոր նրանց գլուխները, ովքեր կսպառնան Ադրբեջանի անվտանգությանը. «Ինչպես վերջ դրեցինք հայկական օկուպացիային, այնպես էլ պատրաստ ենք ցուցադրել մեր ուժը ցանկացած չար ուժի դեմ, եւ թող Իրանում ոչ ոք չմոռանա դա»: Ալիեւն ասել է նաեւ, որ Ադրբեջանում Իրանի դեսպանը կանչվել է արտաքին գործերի նախարարություն, իսկ զինված ուժերը՝ ՊՆ-ն, Պետական սահմանապահ ծառայությունը եւ մյուս բոլոր հատուկ նշանակության ուժերը, բերվել են բարձր մարտական պատրաստության եւ պետք է պատրաստ լինեն ցանկացած գործողություն իրականացնելու:

Այն, որ Նախիջեւանում պայթած դրոնների պատմությունը լուրջ հետաքննության կարիք ունի, արդեն փաստում են փորձագետները: Նախ հիշենք, որ մի քանի օր առաջ էլ Անկարան էր պնդում, թե իրանական հրթիռներ են ընկել Թուրքիայի տարածք: Թեհրանն այդ միջադեպին էլ իր մասնակցությունը հերքեց: Բայց այս երկու բեմադրված հարձակումները վկայում են այն մասին, որ Իսրայելն ու ԱՄՆ-ն մտադիր են երրորդ՝ ցամաքային ճակատ բացել Իրանի դեմ՝ օգտագործելով Ադրբեջանին եւ Թուրքիային, ներքաշելով նրանց շարունակվող սարսափելի պատերազմի մեջ: Պատահական չէ, որ Նախիջեւանի միջադեպին արձագանքեցին բազմաթիվ երկրներ, Բաքվի սերտագույն դաշնակիցները, նախ՝ Էրդողանը, Ուզբեկստանի, Ղազախստանի նախագահները, Պակիստանի առաջնորդը, ԵՄ դիվանագիտության ղեկավար Կալլասը, նաեւ այլ երկրներ՝ Նիդերլանդներից մինչեւ նույնիսկ Ֆրանսիա, որը մինչեւ վերջերս Ադրբեջանը համարում էր ոչ բարեկամական, եթե չասենք՝ թշնամական երկիր, Հայաստանի եւ Արցախի հետ կապված դիրքորոշման պատճառով:

Փաստորեն, միջազգային հանրություն կոչվող ոչ համասեռ ու երեսպաշտ հատվածը կրկին տրվեց Ալիեւի շանտաժին, «կերավ նրա կուտը», որովհետեւ պետք էր նաեւ «հավատարմության երդում տալ» ԱՄՆ նախագահին եւ, ինչու չէ՝ հրեական ազդեցիկ լոբբինգին, որը, ինչպես նույն ԱՄՆ-ում են պնդում, վաղուց կառավարում է Ամերիկան ու անձամբ Թրամփին: Ի դեպ, եթե Թուրքիան եւ Ադրբեջանը միանան հակաիրանական ռազմական արշավին, ապա, ինչպես որոշ փորձագետներ են նշում, հաշվի առնելով այդ երկրների միջեւ ցամաքային ոչ անսահմանափակ կապը, Իրանի դեմ ցամաքային գործողությունների համար տեսականորեն կարող են օգտագործվել Վրաստանի եւ Հայաստանի տարածքները, մեր դեպքում՝ Սյունիքի մարզով, որի շուրջ «հին հաշվարկներ» ունի Բաքու-Անկարա տանդեմը, եւ այդ նենգ ծրագրի վերահաս վտանգների մասին հաճախ էր հիշեցնում Թեհրանը:

Ուշագրավ է նաեւ Մոսկվայի արձագանքը նախիջեւանյան դեպքերին: Ռուսաստանի Պետդումայի ԱՊՀ հարցերով հանձնաժողովի փոխնախագահ Կոնստանտին Զատուլինը կարծում է, որ Բաքվի սերտ համագործակցությունն Իսրայելի հետ եւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի որդեգրած քաղաքական գիծը կարող են լինել Իրանի կողմից Ադրբեջանի վրա հարձակման հնարավոր պատճառ: Ոդեսայում-ին տված հարցազրույցում Զատուլինը նշել է, որ «պետք է լինեն ավելի համոզիչ պատճառներ»: Նշելով, որ անկախ փորձագետները հակված են կարծելու, թե Ադրբեջանն այդպիսով առիթ է փնտրում Իրանի դեմ հակամարտությանը հնարավոր մասնակցության համար՝ հանդես գալով ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից, ռուս պատգամավորը նկատել է. «Եթե այս հաղորդագրությունները ճիշտ են, դա նշանակում է, որ նախկինում Ադրբեջանի տարածքից դեպի Իրան արձակվել են անօդաչու թռչող սարքեր կամ այլ զինատեսակներ, կամ էլ այն պատճառով, որ նրանք, որոնց իրանցիները համարում են Իրանի դեմ գործողության մասնակիցներ, այժմ գտնվում են Ադրբեջանում»: Զատուլինի խոսքով՝ ԱՄՆ-ն եւ Իսրայելը փորձում են խաղացնել Իրանում ազգային փոքրամասնությունների քարտը: Մինչ ամերիկացիները խաղադրույք են կատարում քրդերի վրա, Բաքուն խաղադրույք է կատարում Իրանի էթնիկ ադրբեջանցիների վրա. «Մենք գիտենք, որ Ադրբեջանը ոչ միայն սերտորեն համագործակցում է Թուրքիայի հետ, այլեւ զարգացնում է իր համագործակցությունն Իսրայելի հետ: 12-օրյա պատերազմի ժամանակ Իսրայելը կոչ արեց Իրանի ադրբեջանցիներին՝ ապստամբել կառավարության դեմ, «սեփական ճակատագիրը վերցնել իրենց ձեռքը» եւ այլն: Սրանք վարչապետ Նեթանյահուի՝ անձամբ արված հայտարարություններ էին: Եվ, իհարկե, նրանք այժմ փորձում են ամեն կերպ շահագործել Իրանում ազգային փոքրամասնությունների քարտը»:

Հատկանշական է, որ մարտի 5-ին Ախ նիստ էր հրավիրել նաեւ Նիկոլ Փաշինյանը, նույն օրը կայացել էր ՀՀ եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների հեռախոսազրույցը, Երեւանը գուցե շտապել էր «ցավակցել եւ ինչ-որ հավաստիացումներ տալ» թուրք-ադրբեջանցի «բարեկամներին»:

Էջը՝ Արա ԱԼՈՅԱՆԻ

ԻՐԱՆՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԲԱՑԱՍԱԲԱՐ ԿԱՆԴՐԱԴԱՌՆԱ ՌՈՒՍ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎՐԱ

«Դրապարակի» զրուցակիցն ուկրաինացի փորձագետ **Եվգենի Մագդան** է:

- Մոսկվայի եւ Կիեւի միջեւ ԱՄՆ մասնակցությամբ բանակցությունները ներկայում դադարեցված են Իրանում ռազմական գործողությունների պատճառով՝ հայտարարել է Զելենսկին: Նա նշել է, որ այս պահին եռակողմ հանդիպման համար անհրաժեշտ ազդակներ չկան, սակայն հենց որ ընդհանուր քաղաքական համատեքստը թույլ տա շարունակել եռակողմ դիվանագիտական աշխատանքը, դա կվերսկսվի: Գործընթացի առկախումը մտահոգիչ է Ուկրաինայի համար:

- Քանի որ բանակցային գործընթացում էական առաջընթաց չի գրանցվել, մենք չենք անհանգստանում բանակցությունների նոր փուլի հետաձգման համար: Ուկրաինան պետք է հույսը դնի միայն իր վրա եւ փնտրի իր դիրքերն ամրապնդելու ուղիներ, քանի որ Ռուսաստանի եւ Միացյալ Նահանգների միջեւ կա ակնհայտ կուլիսային փոխըմբռնում: Եվ սա իսկապես շատ դառը գիտակցում է:

- Ռուս-ուկրաինական հակամարտության սկզբից ի վեր Կիեւը բազմիցս մեղադրել է Իրանին՝ Ռուսաստանին անուղղակիորեն օգնելու մեջ. խոսքը, մասնավորապես, Մոսկվային մատակարարվող «Շահեդ»-ների մասին է, թեպետ Թեհրանը պարբերաբար հերքում է այդ լուրերը: Այժմ ինչպիսի՞ն է ձեր երկրի պաշտոնական դիրքորոշումն Իրանի շուրջ ստեղծված ներկայիս իրավիճակի վերաբերյալ:

- Միայն ապացուցված ստախոսը կարող է հերքել Ռուսաստանին «Շահեդ» անօդաչու թռչող սարքերի մատակարարումը: Հիշեցնեմ, որ 2020 թ. հունվարին ԻՀՊԿ-ի հակաօդային պաշտպանությունը Թեհրանի օդանավակայանում խփեց ուկրաինական ուղեւորատար ինքնաթիռ: Թեհրանում ոչ ոք պատշաճ կերպով ներողություն չխնդրեց դրա համար եւ նույնիսկ չքննարկեց դա: Հետեւաբար, Ուկրաինայում ոչ ոք ցավակցություն չի հայտնի Իրանին:

- Ակնհայտ է, որ Կիեւի եւ Թեհրանի հարաբերությունները ջերմ չեն: Հետաքրքիր է, պաշտոնական դիրքորոշումից զատ, ինչպիսի՞ն է պատերազմի մեջ ապրող շարքային ուկրաինացիների վերաբերմունքն Իրանի դեմ իսրայելա-ամերիկյան գործողությունների նկատմամբ:

- Հետաքրքիր է՝ իսկ ինչպե՞ս կվերաբերվեն սովորական քաղաքացիներն ագրեսորի դաշնակցին: Կարծում եմ՝ նրանք կարող են հեռուստատեսությամբ տեսնել, թե ինչ է կատարվում Իրանում, եւ ձեւավորել սեփական դիրքորոշումը: Առնվազն, Ուկրաինայում, ի պաշտպանություն Իրանի, անշուշտ, ցույցեր չեն անցկացվում:

- Ըստ Politico-ի, Վաշինգտոնը սկսել է նախապատրաստվել այն սցենարին, որ Իրանի դեմ գործողությունները կարող են տեւել 100 օր կամ մինչեւ սեպտեմբեր: Իրատեսական համարո՞ւմ եք նման զարգացումը, եւ ինչպե՞ս դա կազդի Ուկրաինայի հարցով խաղաղ բանակցությունների, պատերազմի ելքի վրա՝ հաշվի առնելով ԱՄՆ-ի կենտրոնական դերը երկու գործընթացում:

- Ստիպված եմ ընդգծել, որ ԱՄՆ-ն որոշեց գործողություն սկսել Իրանի դեմ՝ առանց դրական եւ բացասական կողմերը կշռադատելու: Մենք ականատես ենք լինում, թե ինչպես են նրանք միաժամանակ հասնում սահմանափակ ռազմական հաջողությունների եւ խրվում մարտական գործողությունների մեջ: Իրանում ստեղծված իրավիճակը, ակնհայտորեն, բացասաբար կանդրադառնա ռուս-ուկրաինական պատերազմի վրա, քանի որ աշխարհի ուշադրությունը Ռուսաստանի հանցագործություններից տեղափոխվում է Մերձավոր Արեւելքի իրավիճակի վրա: Մյուս կողմից, Ռուսաստանը կորցնում է սեփական ռեսուրսները իրանական հրթիռներով եւ անօդաչու թռչող սարքերով համալրելու ունակությունը: Ամեն դեպքում, Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ պատերազմի արդյունքը կորոշեն այս երկրները եւ ոչ թե ուրիշ մեկը:

Ֆանտաստիկ պատմություններ - 2026

ԲՈՆԱՊԵՏԻ ԳԱՂՏՆԻ ԹՂԹԱՊԱՆԱԿԸ ԿԱՄ ԳԵՐՄԱՐԴՈՒ ՎԵՐՋԸ ՍՏՈՐԱՄԱՐԴՆ Է

Նթվականին, երբ Հայաստանում սկիզբ առած «Սրբազան արժեքների միաբանություն» ուխտի գործունեությունն սկսել էր իր անվանը համապատասխան պտուղներ տալ, եւ, օրինակ, արդարամտությունը կարծես դարձել էր մարդ արարածի կենսաբանական էություն, անհատական, հասարակական ու համընդհանուր կենսահայեցողություն ու կենսակերպ, իսկ Հայաստանը նաեւ դրա շնորհիվ վերականգնել էր նույնիսկ պատմական արդարությունը, հանկարծակի լուրեր տարածվեցին, որ հայտնաբերվել է անհետացած Բռնապետի գաղտնի արխիվը, որը որոշակի լույս կարող էր սփռել Բռնապետի թե՛ անհասկանալի ու անբացատրելի, նույնիսկ առեղծվածային թվացող գործողությունների ու արարքների, թե՛ նրա խիստ տարօրինակ, անըմբռնելի եւ անմեկնելի թվացող գաղափարների ու սկզբունքների վրա, ինչը թերեւս ավելի կարեւոր էր:

Սկզբում արխիվի պարունակության մասին լուրերն այնքան անորոշ ու հանելուկային էին, որքան Բռնապետի անհետացման երեւույթն ինքնին: Սակայն այդ անորոշությունն աստիճանաբար փարատվեց այս ու այն կողմից տարածվող համառ պնդումներով, թե հայտնաբերվածն ընդամենը մի թղթապանակ է, որի պարունակությունը բնավ էլ այնքան հանելուկային չէ, ինչպես թվացել էր սկզբում:

Ըստ այդ լուրերի՝ թղթապանակն ընդամենը մի հավաքածու էր, որտեղ ընդգրկված էին Բռնապետի ամենահավատարիմ մարդկանց ու հետեւորդներին վերաբերող նյութեր, որոնց միջոցով Բռնապետը խոստանում էր հավատարմության դեպքում պարգեւատրել նրանց, իսկ անհավատարմության կամ այլ անհրաժեշտության դեպքում սպառնում էր շանտաժի ենթարկել եւ ապագա անխուսափելի պատժի ուրվականով ստիպել ցմահ հավատարիմ մնալ իրեն: Այլ կերպ ասած՝ այդ թղթապանակն ընդամենը «դոսյեների» կույտ էր, որոնց միջոցով Բռնապետը փորձում էր տարածել ու հաստատուն պահել իր միահեծան իշխանությունը:

Պիտի ավելացնել, սակայն, որ այդ «դոսյեները» խոսում էին ոչ միայն դրանց տերերի մասին, այլեւ վեր էին հանում Բռնապետի հոգու խորքում կուտակված բնավորության թաքուն գծերը, որոնցից հիմնականները թերեւս սադոմազոխիստական հակումներ էին կամ անլիարժեքության եւ մեծամոլության բարդույթների անհաշտ ու անանց բախում, կամ ինքնասիրահարվածության եւ ինքնարհամարհանքի մոլեգին դրսեւորումներ, կամ մարդատյացության եւ անձնատյացության խրախճագին անհագություն, կամ հասարակությունը պառակտելու եւ իրականների ու թշնամականների բաժանելու հիվանդագին տենդ, կամ բացասական լիցք արտածելու անդիմադրելի մղում, կամ երեսպաշտություն ու կեղծապատիրություն, կամ պաթոլոգիկ ստախոսություն, կամ աջ ու ձախ թույն ու թարախ թափելու բնածին հայհոյամտություն, կամ անհագ որկրամոլություն, կամ անթաքույց ու թաքուցյալ ցինիզմ, կամ նմանատիպ ու բազում այլ հատկություններ, որոնց պատկերը, ինչպես ասվեց, անուղղակիորեն արտացոլված էր գաղտնի թղթապանակում:

Հետաքրքիր է, որ Բռնապետի ամենամեծ սպառնալիքներից մեկը հանգում էր առանց իրեն ապագայով վախեցնելուն: Ընդ որում, նա ոչ միայն պարզ հայտարարում էր, որ իր իշխանության անկման կամ իրենից հրաժարվելու դեպքում նրանց անխուսափելի պատիժներ են սպառնում, այլեւ նշում էր պատժի տեսակներն ու նախազգուշացնում, որ դրանցից նվազագույնը կարող է լինել Անարգանքի սյունը:

Պակաս հետաքրքիր չէր այն, որ Բռնապետը թղթապանակի բազմաէջանոց սեւագրություններում լայն անդրադարձ էր կատարել Անարգանքի սյունին գամելու պատժատեսակի պատմությանը, բերել օրինակներ, թե ինչպես է ծագել այն, ինչ դրսեւորումներ է ունեցել հին ու նոր աշխարհներում, Արեւելքում, Արեւմուտքում, ինչ ձեւերով ու անուններով է հանդես եկել, ինչ նպատակներ է հետապնդել եւ այլն, եւ այլն:

Թեեւ հանրահայտ է, որ Անարգանքի սյունին գամելը եղել է ոչ այնքան ֆիզիկական կամ իրավական պատժատեսակ, որքան հասարակական պարսավանքի միջոցով պատժի ենթարկելու եղանակ, սակայն ուշագրավն այն էր, որ Բռնապետը թեեւ իր գործունեությամբ զրոյի էր հավասարեցրել հասարակական կարծիքի դերն ու նշանակությունը, այդպիսով իսպառ փոշիացրել նաեւ հանրային պարսավանքի ինստիտուտի դերն ու նշանակությունը, բայց իր ենթականերին սպառնում էր հենց այդ ինստիտուտի գործունեության հետեւանքներով, այն էլ՝ վաղուց մոռացության մատնված մի պատժատեսակով վախեցնելով եւ կարծես ակնարկելով, թե գոյություն ունի պատժի մի ոլորտ, որտեղ չի գործում հանցանքի ժամկետանցության իրավաբանական նորմը, եւ ապագան անցյալի հայելին է սոսկ, որտեղ հանցանքը կարող է արտացոլվել նաեւ իբրեւ մեղք ու մեղսագործություն:

Այդուամենայնիվ, թղթապանակի բովանդակության մեջ չափազանց խորամուխ լինելու գայթակղությունից զերծ մնալով ասենք, որ այդտեղ ամենաուշագրավ հանգամանքներից մեկն այն մեթոդաբանությունն էր, որով Բռնապետը դասակարգել էր խոստումների ու սպառնալիքի ենթարկվողներին եւ չափման այն միավորը, որով նա գնահատում էր նրանց:

Գրառումների այս հատվածը նա սկսել էր «Իմ ուժը ձեր ստոր/աքարշ/ության մեջ է» նախադասությամբ: Ի դեպ, սեւագրերում նա մի տեղ փակագծում լատինական հարցական նշան էր դրել «ստորաքարշություն» բառի կողքին եւ գրել «ստորություն», ասես չէր կողմնորոշվել, թե որ ձեւակերպմանը նախապատվություն տա, հետո միավորել էր այդ երկուսը եւ այնուհետեւ օգտագործել մեր մեջբերած ձեւով: Բացի այդ, սեւագրություններում Բռնապետն օգտագործել էր եւս մի քանի նմանատիպ աֆորիստիկ արտահայտություններ, ինչպիսիք են, օրինակ, «Ձեր անվտանգությունը Ձեր ստորաքարշության մեջ է» կամ «Փոքրոգությունը գոյապահպանման միջոց է», կամ «Նույնն է պատիժը, եւ նույնն է պարգեւը», կամ «Այս աշխարհում գաղտնիք գոյություն չունի. գաղտնիք գոյություն ունի միայն նրանց համար, ովքեր չեն ուզում իմանալ այն», ապա եւ՝ «Հիբրիդային խոստումներ ու պարգեւներ», «Հիբրիդային սպառնալիքներ, հիբրիդային շանտաժ, հիբրիդային մեղադրանք» կարծես ուղեցուցային բանաձեւումները եւ այլն, եւ այլն:

Ապա Բռնապետը ներկայացրել էր գնահատման մի բավական հստակ սանդղակ, որտեղ իբրեւ պարգեւի կամ պատժի չափման միավոր օգտագործում էր կարծես տիեզերական չափման միավորի հնչողության հավակնող «ստորաս» անվամբ գնահատման մի միավոր:

Թղթապանակի պարունակությանը քիչ թե շատ ծանոթ որեւէ մեկի համար գաղտնիք չէր կարող լինել, որ այս «ստորասը» Բռնապետի հորինած չափման միավորն է, բառի պարզ վերլուծությունն իսկ ցույց էր տալիս, որ այն բաղկացած է «ստոր» եւ «աս»-աստիճան բառարմատներից, հետեւաբար՝ նշանակում է «ստորության աստիճան» կամ «ստորաքարշության աստիճան» (այստեղ պարզ էր դառնում, թե ինչու էր Բռնապետը երկմտել հայերենում անիմաստ ужас-торас բառի: Հոգեւորականների համար նա սահմանել էր չափման «հոգեստորաս» միավոր, որն ակնհայտորեն նշանակում էր «հոգեւորականի ստոր/աքարշ/ության աստիճան»: Մտավորականների համար սահմանել էր չափման «մտաստորաս» միավոր, որը նշանակում էր «մտավորականի ստոր/աքարշ/ության աստիճան»: Ամբոխի համար սահմանել էր «ամբոստորաս» չափման միավոր, որը, պարզ է՝ նշանակում էր «ամբոխի ստոր/աքարշ/ության աստիճան»:

Այդպես սահմանված էին նաեւ հասարակության այլ խավերին տրված գնահատականներն ու չափման միավորները, որոնց անդրադառնալն անիմաստ է, որովհետեւ դա կարծես վերջ չունեցող մի շարան էր: Սակայն ուզում ենք անդրադառնալ եւս մի, մեր կարծիքով՝ բավական ուշագրավ ձեւակերպման, որը նույնպես բավական լույս է սփռում Բռնապետի մտածողության ու նրա իշխանության երկարակեցության գաղտնիքի վրա: Բռնապետն օգտագործել էր նաեւ «համաստորաս» ձեւակերպմամբ մի գնահատական, որը սկզբում թվաց, թե ինչ-որ համընդհանուր բնույթի գնահատական է, սակայն սեւագրության հետագա ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այն ընդամենը «հասարակ մարդու ստոր/աքարշ/ության աստիճան» արտահայտության հապավումն է:

Պետք է ասել, որ Պարգեւների սյունին արժանացնելու հիմնավորումներն ու ձեւերը ներկայացնելիս Բռնապետն իր ձեւակերպումներում եղել էր բավական ժլատ ու անտարբեր՝ բոլորի համար սահմանելով մեկ ընդհանուր սանդղակ՝ մեկ ստորասը գնահատելով իբրեւ մեկ պարգեւավճար:

Այլ էր եղել նրա վերաբերմունքն Անարգանքի սյունի հարցում: Այստեղ նա դրսեւորել էր, կարելի է ասել, իրոք անսանձ երեւակայություն եւ լիովին հագուրդ տվել իր չարախինդ, հիշաչար ու քինախնդիր բնավորությանը: Այսպես, նա «Անարգանքի սյուն» արտահայտությունը նույնպես վերածել էր չափման միավորի եւ այդ արտահայտությունն այնպես էր հապավել, որ ստացել էր «Անասյուն» ոչ այնքան երկիմաստ բառը (սեւագրություններում նա փոփոխության էր ենթարկել նաեւ այս բառը եւ, յ-ի վրա գիծ քաշելով, ստացել ուղղակի Անասուն, սակայն հետո կարծես ամաչել էր, որ այդքան բութ ու անհասկացողի

Շարունակությունը՝ էջ 8

«ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՄԱՍՇՏԱԲԻ ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹՅԱՆ» ՕՐԵՐԸ ԶՄՌԱՆ ՆՄԱՆ ԳԱԼԻՍ ՈՒ ՉԵՆ ԳՆՈՒՄ

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Զշխարհի զարգացած եւ զարգացող երկրներում արտադրական հոսքագծերն են անխափան աշխատում՝ թողարկելով ապրանքներ, տեխնոլոգիաներ, մեքենաներ, միկրոչիպեր, դեղամիջոցներ եւ այլն, ստեղծելով նյութական արժեք ու բարիք, ամրացնելով պետականությունը,

իսկ Հայաստանում բոլորովին այլ «հոսքագիծ» է աշխատում, որը չի արտադրում նյութական արժեք, այլ՝ միայն աղմուկ, սենսացիա, տեղեկատվական ցնցումներ, քաղաքական սկանդալներ:

Վերջին 8 տարիներին Հայաստանում աշխատող այդ «կոնվեյերը» ոչ մի որպե չի կանգնում, չի հոգնում: Հասարակությանն է մատակարարում հերթական «արտադրանքը», հասարակությունն էլ այն կլանում է՝ սկսում քննարկել, վիճել, վերլուծել, արդարացնել կամ դատապարտել: Ոչ թե զբաղված է իր աշխատանքով, ինչ-որ բան ստեղծելով, այլ՝ հերթական հայտարարության մեկնաբանությամբ: Եվ սա մեխանիզմ է: Քաղաքական տեխնոլոգիա: Նման հասարակությունն այլեւս ժամանակ չունի այլ բանի մասին մտածելու, կառուցելու, արարելու:

Ժամանակակից Հայաստանի քաղաքական կյանքում խոսքն այլեւս «իրադարձություն» է: Այս տարիներին հնչել են բազմաթիվ վիճահարույց ձեւակերպումներ՝ Արցախի, հայոց պատմության, ազգային արժեհամակարգի, Եկեղեցու, պետական ինքնության վերաբերյալ: Յուրաքանչյուր նման հայտարարություն օրերով ու շաբաթներով դարձել է քննարկման առարկա: Հարցը նույնիսկ այն չէ՝ ճիշտ են այդ ձեւակերպումները, թե՝ սխալ: Կարեւորն այն է, որ հասարակությունը մշտապես լարված է՝ քաղաքական կոնվեյերը գործում է: Քննարկումը հասնում է գագաթնակետին, հոսքագիծը նոր թեմա է նետում: Հինը մարում է, նորն է գալիս: Եվ այսպես՝ անվերջ: Հիշենք մի քանի արտահայտություն, որոնք ժամանակին ցնցեցին հանրային դաշտը եւ հետո մոռացվեցին աղմուկի մեջ: Շուշին «գորշ» քաղաք էր, ձյունոտ սարերն «անպետք» էին, ցեղասպանության ճանաչման գործընթացը վնասակար էր, Կիրանցի պատը մեր ամենամեծ ձեռքբերումներից էր, եկեղեցիները «չուլաններ» էին... Եվ սրանք պարզապես բառեր չէին, այլ՝ արժեքային սահմանների խախտում:

Հայ առաքելական եկեղեցին դարերով եղել է հայի ինքնության կրողը՝ պետականության բացակայության պայմաններում: Եվ երբ նրա հասցեին հնչում են նման ձեւակերպումներ, դա ընկալվում է ոչ թե որպես քաղաքական դիսկուրս, այլ՝ որպես արժեքային բախում: Ամենայն հայոց կաթողիկոսի նկատմամբ իրավական գործընթաց սկսելու լուրը «կոնվեյերի» հերթական արտանետումն էր, որը նաեւ քաղաքական եւ հոգեբանական ծանր ազդեցություն ունեցավ: Հասարակության մի հատված դա ընկալեց որպես պետականության սյուներից մեկի նկատմամբ դաժան հարված, բայց թեման մաշվեց շաբաթների քննարկման մեջ՝ իր տեղը զիջեց նոր իրադարձություններին: Չնայած կաթողիկոսի հետ կապված գործընթացը ոմանք որպես «տիեզերական մասշտաբի խայտառակություն» որակեցին:

Մի քանի օր կամ շաբաթ էլ ասպարեզում Հայաստանի էներգետիկ անվտանգության թեման էր՝ Մեծամորի ատոմակայանի փակման ֆոնին, որն իշխանությունը փորձեց սքողել նոր մոդուլային կայանների թեմայով՝ որպես ներդրումների հայտություն, որոնք ժամանակին հանրային դաշտը եւ հետո մոռացվեցին աղմուկի մեջ: Ինչպես «գորշ» քաղաք էր, ձյունոտ սարերն «անպետք» էին, ցեղասպանության ճանաչման գործընթացը վնասակար էր, Կիրանցի պատը մեր ամենամեծ ձեռքբերումներից էր, եկեղեցիները «չուլաններ» էին... Եվ սրանք պարզապես բառեր չէին, այլ՝ արժեքային սահմանների խախտում:

Հայ առաքելական եկեղեցին դարերով եղել է հայի ինքնության կրողը՝ պետականության բացակայության պայմաններում: Եվ երբ հնարավորություն: Մասնագետները սկսեցին քննարկել՝ տնտեսական առումով որքանո՞վ է ամերիկյան առաջարկը հիմնավոր, ինչպիսի՞ երկարաժամկետ պարտավորություններ է առաջացնում, ուժեղացնո՞ւմ է մեր ինքնիշխանությունը, թե՞ թուլացնում:

Հավերժ ակտուալ թեմաներից է՝ բռնել, բաց թողնել, նորից բռնել: Այսօր մարդուն ձերբակալում են, հանրությունը ցնցվում է, օրեր անց ազատ են արձակում: Բացատրություն չկա: Ոչ ոք պատասխան չի տալիս՝ ինչ հանցանքի համար էր կալանավորվել, եթե հանցանք չկար, ո՞վ է պատասխան տալու այդ անարդարության համար: Հին առակն ասում է. Աստված ուզում է երջանկացնել աղքատին, վերցնում է նրա միակ կովը, հետո այնպես է անում, որ նա գտնի այն ու երջանկանա՝ մոռանալով, որ գտել է իր ունեցածը: Ինչպե՞ս կարող է իրավական պետությունում ազատազրկումը դառնալ քաղաքական սցենարի մաս: Սա արդարադատությո՞ւն է, թե՞ հասարակության նյարդերի հետ խաղ: Օրենքը պետք է լինի կանխատեսելի: Իսկ Հայաստանի խնդիրը ոչ միայն որոշումների որակն է, այլեւ՝ հանրային էներգիայի վատնումը: Մենք պետք է որոշենք՝ մնանք արձագանքող հասարակությո՞ւն, թե՞ դառնանք կառուցող հասարակություն: «Կոնվեյերը» կարող է արտադրել աղմուկ, բայց ազգը չի կարող ապրել աղմուկով:

Եթե մեր ողջ մտավոր ու հոգեկան էներգիան ծախսում ենք արձագանքի վրա, մենք երբեք չենք ստեղծի արդյունք: Արժեք չարտադրող պետությունը խոցելի է: Պատմական պատասխանատվությունը կարող է ուշանալ, բայց չի վերանա: Երբ պետության ղեկավարը մշտապես ցնցումներ է առաջացնում եւ անորոշություն, երբ խոսքը չարաշահում են, երբ իրավական գործընթացները գործիք են դարձնում, դա պարզապես սխալների շղթա չէ, դա կառավարման ոճ է: Մենք իրավունք ունենք պահանջելու պատասխանատվություն եւ հեռացնելու անպատասխանատու իշխանություններին: «Կորցրած կովը գտնելը» երջանկություն չէ:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 7.03.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

Սկիզբը՝ էջ 7

Հակոբ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

տեղ է դնում իր հետեւորդներին, եւ վերականգնել էր բառի նախնական տեսքը):

Բռնապետի գաղտնի թղթապանակի սեւագրություններում հայտնաբերված աղյուսակն ուներ հետեւյալ տեսքը.

Մեկ համաստորասը հավասար է տասը Անասյունի (այսինքն՝ Անարգանքի սյունի): Մեկ ամբոստորասը հավասար է երկու համաստորասի, հավասար է քսան Անասյունի: Եվ շարունակել էր նույն տրամաբանությամբ.

Մեկ պաստորասը հավասար է երեսուն Անասյունի: Մեկ ուժաստորասը հավասար է քառասուն Անասյունի: Մեկ հոգեստորասը հավասար է հիսուն Անասյունի: Մեկ մտաստորասը հավասար է վաթսուն Անասյունի:

Ճիշտ է, այստեղ կարող է առաջանալ Բռնապետի գնահատման միավորները, աստիճաններն ու սանդղակը վիճարկելու գայթակղություն, մասնավորապես, կարող է բնական հարց ծագել, թե ինչու նա իր սանդղակում չէր ընդգրկել իրավապաշտպան հորջորջվող կամ այլեւայլ կազմակերպություններին, խոշոր կամ մանր եղջերավոր անհատներին, մտքով կույրերին, հաստահամառակողներին եւ այլն, սակայն հասկանալի է, որ պետք է արագորեն ազատվել այդ մտքից, քանի որ դա բոլորովին անիմաստ զբաղմունք է, մանավանդ որ վստահ չենք, թե որեւէ մեկը կարող է այս բնագավառում ունենալ այնպիսի հիվանդորեն անսանձ երեւակայություն, ինչպիսին Բռնապետինն էր:

Ասում են, սակայն, որ Բռնապետի գաղտնի արխիվում դեռ կան չհայտնաբերված շատ թղթապանակներ, որոնցից մեկում նա, հայտնի հեղինակի հայտնի հերոսի օրինակով, ինքնադատաստանի եւ ինքնախոշտանգման է ենթարկում ինքն իրեն եւ ինքնակամ գամվում Անարգանքի սյունին, սակայն այս խոսակցությունները դեռ փաստացի ապացույցներ չունեն: Բացի այդ, դա կարող էր խաբկանք ստեղծել, որ Բռնապետի մեջ արթնացել է խիղճը կամ զղջումը, կամ նման մի բան, ինչը, սակայն, խիստ անհավանական էր Բռնապետի բնույթի համար, մանավանդ որ չէին հայտնաբերվել գնահատումների այն սանդղակն ու միավորների այն քանակը, որոնցով այդ դեպքում պիտի ինքն իրեն չափորոշած լիներ նա:

Ճիշտ է, այս երկրորդ թղթապանակի գոյությանը հավատացողները պնդում էին, թե չհայտնաբերված թղթապանակում Բռնապետի ինքնաստորասներն ուղղակի միտում են անսահմանության եւ չափման իսկապես տիեզերական միավորների, իրենք նույնիսկ փորձել են ինքնուրույն չափել նրա ստորասների քանակը եւ հանգել են նրան, որ մեկ Բռնաստորասը հավասար է ուղիղ վեց հարյուր վաթսունվեց ստորասի, իսկ Բռնապետն իրեն ինքնադատաստանի է ենթարկում ոչ թե իր սխալի գիտակցումից կամ արթնացած խղճի թելադրանքով, ոչ էլ, առավել եւս, իր իրավացիությունն ապացուցելու մղումից, այլ գիտակցելով, որ ինքը գործի է դրել մի այնպիսի մեխանիզմ, որի աշխատանքը հնարավոր չէ կանգնեցնել, եւ այլեւս ոչինչ հնարավոր չէ փոխել, ինչպես հնարավոր չէ կանգնեցնել կամ փոխել իրերի բնական ընթացքը, սակայն այս պնդումները սոսկ ենթադրական էին եւ քննադատության այնքան էլ չէին դիմանում:

Այդուհանդերձ, այսօրինակ պնդումներից առավել հետաքրքիրն այն էր՝ Բռնապետն իբր այդ թղթապանակը վերնագրո՞ւմ, թե՞ ավարտել է իրեն բնորոշ մի տարօրինակ նախադասությամբ՝ գլխագիր գրելով՝ ԳԵՐՄԱՐԴՈՒ ՎԵՐՋԸ ՍՏՈՐԱՄԱՐԴՆ Է, ինչն էլ մենք օգտագործել ենք իբրեւ երկրորդ վերնագիր՝ հուսալով, որ մի օր կհայտնաբերվի նաեւ այդ թղթապանակը, եւ կբացահայտվի դրա բովանդակությունը նույնպես:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am